

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏԵԴԵԿԱԳԻՐ ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

Журнал издается с 5.01.1948 г.

Выходит 4 раза в год

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ռ.Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (գլխավոր խմբագիր), Ա.Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ (գլխ. խմբ.
տեղակալ), Զ.Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ս.Գ. ԱՂԲԱԼՅԱՆ,
Վ.Վ. ԲՈՒՆԻԱՏՅԱՆ, Ժ.Դ. ԴԱՎԻԴՅԱՆ, Ս.Պ. ԴԱՎԹՅԱՆ, Ս.Մ. ԴԱԶԱՐՅԱՆ,
Ո.Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, Վ.Շ. ՄԵԼԻԿՅԱՆ, ՅՈՒ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Վ.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ,
Վ.Ս. ՍԱՖԱՐՅԱՆ, Ս.Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, Մ.Գ. ՍՏԱԿՅԱՆ, Ա.Թ. ՔՈՒՉՈՒԿՅԱՆ

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Р.М. МАРТИРОСЯН (главный редактор), А.Х. ГРИГОРЯН (зам. глав. редактора),
З.К. СТЕПАНЯН (ответственный секретарь), С.Г. АГБАЛЯН, В.В. БУНИАТЯН,
Ж.Д. ДАВИДЯН, С.П. ДАВТЯН, С.М. КАЗАРЯН, А.Т. КУЧУКЯН, В.З. МАРУХЯН,
В.Ш. МЕЛИКЯН, Ю.Л. САРКИСЯН, В.С. САРКИСЯН, В.С. САФАРЯН,
С.О. СИМОНЯН, М.Г. СТАКЯН

EDITORIAL BOARD

R.M. MARTIROSSYAN (editor-in-chief), A.Kh. GRIGORYAN (vice-editor-in-chief),
Z.K. STEPANYAN (executive secretary), S.G. AGHBALYAN, V.V. BUNIATYAN,
Zh.D. DAVIDYAN, S.P. DAVTYAN, S.M. GHAZARYAN, A.T. KUCHUKYAN,
V.Z. MARUKHYAN, V.Sh. MELIKYAN, YU.L. SARGSYAN, V.S. SARKISSYAN,
V.A. SAFARYAN, S.H. SIMONYAN, M.G. STAKYAN

Հրատ. խմբագիր՝

Ժ.Ս. ՄԵՅԴԱՆՅԱՆ

Խմբագիրներ՝

Հ.Յ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.Զ. ԴԱԶԱՐՅԱՆ

© Издательство НПУА
Известия НАН РА и НПУА (сер. техн. наук), 2017

Գ.Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Մ.Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Հ.Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀՈԾ ԵՎ ԵՌԱԿԱԼՎԱԾ ԿԼՈՐ ՀԱՏՈՒՅԹՈՎ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԲԱՑ ՄԻՋԱՍԵՂՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՑԻՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ

Կատարվել է ավտոմատացված ծրագրային միջավայրում (ԱԾՄ) հոծ և եռակալված նյութերից գլանական նմուշների բաց միջասեղման գործընթացների մոդելավորում և լարվածադեֆորմացիոն վիճակի հետազոտում, երբ տեղի է ունենում բացարձակ կոշտ մամլամատի տակ նմուշի նյութի հավասար իջեցում: Հոծ նյութից գլանի դեպքն իրականացվում է՝ օգտագործելով շառավղի ուղղությամբ երեք տարբեր ճնշում հաղորդող երեք կոշտ գլանական մասերից բաղկացած մամլամատ, և քննարկվել են միայն առաջին պլաստիկ դեֆորմացման առաջացման տվյալները: Եռակալված նյութից գլանի դեպքում նմուշի հավասար իջեցումն ապահովվում է մամլամատի տակ նյութի համապատասխան կետերի նմուշի առանցքի ուղղությամբ հավասար տեղափոխությամբ, և գլանի բավականին մեծ պլաստիկ դեֆորմացման դեպքի տվյալների հետազոտման հետ միասին ուսումնասիրվում են նաև նյութի ծակոտկենության բաշխման գոտիները:


Առանցքային բառեր. հոծ և եռակալված նյութ, գլանի բաց միջասեղմում, առանցքասիմետրիկ դեֆորմացում, լարվածադեֆորմացիոն վիճակ, միջին լարում, ծակոտկենություն:

Մեքենաշինության տեխնոլոգիական գործընթացներում լայնորեն օգտագործվում են հոծ և եռակալված գլանական նախապատրաստվածքների պլաստիկ դեֆորմացման տարբեր մեթոդներ, որոնց ձևափոխման և խտացման օրինաչափությունները զգալի ազդեցություն են ունենում ստացված նյութերի ֆիզիկամեխանիկական և շահագործման հատկությունների վրա: Այդ հարցերի հետազոտումը հիմնված է համապատասխան նյութերի պլաստիկության տեսությունների վրա:


[1]-ում վերլուծվել են տարբեր հեղինակների կողմից մշակված ծակոտկեն նյութերի պլաստիկության տեսությունները (ՇՆՊՏ), բերված են փոշենյութերի ամրացումը և իրական ծակոտկենությունը հաշվի առնող դեֆորմացիոն և հոսունության տեսությունների հավասարումները, ցույց է տրվել, որ ծակոտկենության բացակայության դեպքում այդ բանաձևերից ստացվում են հոծ նյութերի համապատասխան հավասարումները, լուսաբանվել են նյութերի ընթացիկ ծակոտկենության որոշման և դրանց դեֆորմացման գրաֆիկների կառուցման հարցերը, մշակվել են փոշենյութերի ճնշմամբ մշակման խնդիրների լարվածադեֆորմացիոն վիճակների հետազոտման ճշգրիտ, մոտավոր և թվային մեթոդներ, ներառյալ ավելի հեռանկարային՝ վերջավոր տարրերի մեթոդը (ՎՏՄ), ինչպես նաև լուծվել են բազմաթիվ տեխնոլոգիական խնդիրներ:

Սկզբնական D տրամագծերի և h բարձրության գլանական նախապատրաստվածքի (նմուշի) բաց և փակ d տրամագծի մամլամատով միջասեղմման դեպքերում [2] առաջանում է անցք: [2] - ում քննարկվում են նմուշի սկզբնական ձևի փոփոխության և դրա դեֆորմացման տեսակարար - միջին ուժի ($p=P/A$, որտեղ P - ն դեֆորմացման ուժն է, իսկ A - ն՝ մամլամատի լայնական հատույթի մակերեսը) վրա D/d հարաբերության ազդեցության հարցերը, ինչպես նաև կատարելով բազմաթիվ ենթադրություններ՝ բաց և փակ միջասեղմման խնդիրների վերլուծական մեթոդով լուծման դեպքերում ստացվել են մոտավոր բանաձևեր:

[3] - ում ներկայացվել են եռակալված գլանական նախապատրաստվածքի խտացման վրա ազդող դեֆորմացիոն սխեմայի տեսական ուսումնասիրության արդյունքները համասեռ և անհամասեռ պլաստիկ դեֆորմացման դեպքում: Բացահայտվել են միջասեղմման դեպքում ՎՏՄ ստացված **լարվածադեֆորմացիոն վիճակի** բաղադրիչների և նյութի ընթացիկ ծակոտկենության բաշխման (նկ. 1 և 2) առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս կանխատեսել տեխնոլոգիական գործընթացների ռեժիմները և դեֆորմացման աստիճանի մեծ միջակայքի դեպքում նախապատրաստվածքի խտացման օրինաչափությունները: Ընդ որում, ՎՏՄ-ով խնդրի լուծման թվային հաշվարկը կատարվել է Գ.Վ. Մուսայելյանի կողմից՝ FORTRAN-ի միջավայրում կազմված ծրագրով:



Նկ. 1. Պլաստիկ դեֆորմացված նմուշի առանցքային հատույթի կեսի ծակոտկենության բաշխման գոտիները [3]



Նկ. 2. Պլաստիկ դեֆորմացված նմուշի վերնի մակերևույթի կեսի վրա լարվածադեֆորմացիոն վիճակի բաղադրիչների բաշխման էպյուրները [3]

Նկ.1-ում ըստ նմուշի գոտիների՝ 16% սկզբնական ծակոտկենության փոփոխված արժեքների մեծություններն են. 1-ում նյութի միջին ծակոտկենությունը դարձել է 10,5%, 2-ում՝ 13,3%, 3-ում՝ 15%, 4-ում՝ 15,8%, 5-ում՝ 16%:

Նկ.2-ում պատկերված են վերևի մակերևույթում առանցքային լարումների (1), շառավղային լարումների (2), շրջանային լարումների (3), շոշափող լարումների (4), համաթեքային լարումների (5) և պլաստիկ դեֆորմացումների համաթեքային աճի ինտեգրալի (6) էպյուրները: Այս կորերի համադրումը նկ.2 – ում ցույց է տալիս, որ ծակոտկեն նմուշի լարվածադեֆորմացիոն վիճակի բաղադրիչներն ընդունում են իրենց առավելագույն արժեքը նմուշի և մամլամատի եզրի հպման մասերում;


[4] – ում վերլուծվել են հեղինակային խմբի կողմից ավտոմատացված ծրագրային միջավայրում (ԱՕՄ) կատարված հիմնական աշխատանքները: [1]-ում գլանական եռակալված ձողի մամլման գործընթացը մոդելավորվել է «ABAQUS»-ով: Խնդիրը լուծվել է առանց հակաճնշման և դրա երեք հետևյալ արժեքների համար՝ 80, 160, 240 ՄՊա: Դրանցից 0 և 240 ՄՊա հակաճնշումներով մամլման դեպքերի թվային տվյալները բերված են լարումների և դեֆորմացումների փոփոխման դաշտերի պատկերների տեսքով, ինչը թույլ է տալիս գործընթացի մասին պատկերացում կազմել՝ կառուցելով նաև դրանց փոփոխության գրաֆիկները: Խնդրի լուծման համար օգտագործվել է վերլուծական մեթոդով խնդրի լուծման դեպքում մշակված [5] - ի մեթոդը:

[6] – ում գլանական եռակալված ձողի մեծ հակաճնշումներով մամլման գործընթացը մոդելավորվել է ԱՕՄ –ում “ABAQUS”-ով: Օգտագործվել է [4]-ում մշակված խնդրի լուծման մեթոդը: Հիմնավորվել է մեծ հակաճնշման արժեքների ընտրության հարցը: Ստացված լարվածային վիճակի բաղադրիչների և նյութի ծակոտկենության թվային արդյունքների վերլուծության հիման վրա բացահայտվել են գործընթացի որոշ առանձնահատկություններ: Կատարվել են համապատասխան փորձարարական և տեխնոլոգիական հետազոտություններ:

Նշենք, որ [2] և այլ հայտնի գիտական հետազոտությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գլանական նմուշների միջասեղման գործընթացի՝ վերլուծական մեթոդով լուծմամբ հնարավոր չէ ստանալ այնպիսի ճշգրիտ արդյունքներ, ինչպիսիք ստացվում են ՎՏՄ-ի օգտագործման դեպքում: Սակայն ՎՏՄ-ով հետազոտությունները բավականին քիչ են, մանավանդ ԱՕՄ-ում լուծվածները, ինչով և հիմնավորվում է այդ բնագավառում գիտական հետազոտությունների կատարման արդիականությունը:

Աշխատանքի նպատակն է ԱՕՄ-ում հոծ և եռակալված նյութից գլանական նմուշների բաց միջասեղման գործընթացների լարվածադեֆորմացիոն վիճակների և նյութի ծակոտկենության բաշխման հետազոտումը՝ բացարձակ կոշտ մամլամատի տակ նմուշի նյութի հավասար իջեցման դեպքում, ինչպես նաև ստացված արդյունքների համեմատումը [2, 3] – ի տվյալների հետ:

1. Հոծ նյութից գլանական նմուշի միջասեղման խնդրի լուծումը՝ օգտագործելով շառավղի ուղղությամբ երեք տարբեր ճնշում հաղորդող երեք կոշտ գլանական մասերից բաղկացած մամլամատ: ԱՕՄ – ում մոդելավորվել է $h=40$ մմ բարձրությամբ և $D=30$ մմ տրամագծով գլանի (որի նյութի Յունգի մոդուլը $2 \cdot 10^5$ ՄՊա է, Պուասոնի գործակիցը՝ 0,3 և հոսունության սահմանը՝ 150 ՄՊա) սեղմման գործընթացը, ինչը հնարավորություն է տալիս ուսումնասիրել գործընթացի ժամանակ առաջացած լարվածադեֆորմացիոն վիճակի բազմաթիվ տվյալները (նկ.3 և աղ. 1): Ընդ որում, նկ.3 – ում աղյուսակի տեսքով ըստ գույների բերված են նշված լարումների արժեքները՝ արտահայտված պասկալներով:



Նկ. 3. Գլանի բաց միջասեղման դեպքում լարվածային վիճակի Միզեսի (ա), շառավղային (բ), առանցքային (գ) և շոշափող (դ) լարումների բաշխման գոտիները

Դիտարկվում է գլանի տրամագծային հատույթի $\frac{1}{2}$ մասը, որի շառավղի կեսին հավասար իջեցումն իրականացվում է տարբեր ճնշումներով (150, 180, 265 ՄՊա) իրար հետ աշխատող 3 մասից բաղկացած մամլամատերի միջոցով, որոնցից առաջինի (ներսի փոքր մամլամատի) շառավիղը 2,5 մմ է, իսկ մյուսները սնամեջ են՝ համապատասխանաբար (2,5 և 5) մմ ու (5 և 7,5) մմ շառավիղներով:

Ընդ որում, մամլամատի այդ մասերի վրա ընկած դեֆորմացման ուժերի մեծություններն են համապատասխանաբար 0,74, 2,65 և 6,50 կՆ:


Աղյուսակ 1

Հոծ նյութից գլանի բաց միջասեղման տվյալները

Վերնի կետերը	S, Mises, ՄՊա	S11, ՄՊա	S22, ՄՊա	S33, ՄՊա	σ_0 , ՄՊա	S12, ՄՊա
1	63	-85	-149	-85	-106	1
2	65	-88	-153	-88	-110	-2
3	72	-95	-166	-94	-118	-4
4	81	-104	-183	-103	-130	-6
5	106	-118	-224	-119	-154	-8
6	136	-109	-240	-120	-156	17
7	101	-56	-132	-69	-86	37
8	35	-6	-16	-17	-13	17
9	14	9	1	-5	2	1
10	12	9	-2	-4	1	0
11	8	6	0	-3	1	-2
12	5	2	0	-3	0	-1
13	4	1	1	-3	0	-1

Առանցքասիմետրիկ խնդրի լուծման արդյունքում ստացվել են լարվածադեֆորմացիոն վիճակի բոլոր բաղադրիչները գլանի բաց միջասեղման դեպքում, երբ տեղի է ունենում բացարձակ կոշտ մամլամատի տակ գլանի նյութի հավասար իջեցում: Ստացված բազմաթիվ տվյալներից դիտարկենք միայն առաջին պլաստիկ դեֆորմացման առաջացման դեպքերը: Նկ. 3 – ում գլանի առանցքային հատույթի կեսի վրա ցույց են տրված Միզենի ($\sigma_i = S$), շառավղային ($\sigma_r = S11$), առանցքային ($\sigma_y = S22$) և շոշափող ($\tau_{r\theta} = S12$) լարումների բաշխման գոտիները, իսկ աղ. 1- ում բերված են գլանի առանցքից հաշված վերնի եզրի 13 կետերում համապատասխան լարումների և միջին $\sigma_0 = (\sigma_y + \sigma_r + \sigma_\theta)/3$ լարման արժեքները: Ընդ որում, $\sigma_\theta = S33$ -ը շրջանային լարումն է, որի հիմնական արժեքները (մամլամատի տակ) բավականին մոտ են շառավղային ($\sigma_r = S11$) լարումներին [7], իսկ σ_0 -ի տվյալներով (1) բանաձևով գնահատվում է նյութի խտացման գործընթացը:


Նկ. 4-ում ցույց է տրված բաց միջասեղման դեպքում գլանի վերնի եզրի 13 կետերի տվյալներով կառուցված առանցքային $\sigma_y = S22$ լարումների գրաֆիկը: Ինչպես տեսնում ենք, դրա տեսքը ամբողջապես համապատասխանում է նկ. 2-ի թիվ 1 գրաֆիկին:




Նկ. 4. Բաց միջասեղմման դեպքում առանցքային $\sigma_y = S22$ լարումների գրաֆիկը՝ կառուցված գլանի վերնի եզրի 13 կետի տվյալներով

2. Եռակալված նյութից գլանական միջասեղմման խնդրի լուծումը՝ օգտագործելով մամլամատի տակ նախապատրաստվածքի նյութի կետերի առանցքի ուղղությամբ հավասար տեղափոխությունը: Խնդրի ԱՕՄ-ում մոդելավորման համար ընտրվել են նմուշի այլ չափսեր. տրամագիծը՝ $D=20$ մմ, բարձրությունը՝ $h=30$ մմ, նյութի տվյալները՝ խտությունը 7800 կգ/մ³, Յունգի մոդուլը՝ $2,1 \cdot 10^5$ ՄՊա, Պուասոնի գործակիցը՝ 0,3, սկզբնական հարաբերական խտության $\rho = 0,8$ (կամ ծակոտկենության $v_0=0,2$) և հոսունության սահմանի (150 ՄՊա) մեծությունները, ինչպես նաև դրա պլաստիկ դեֆորմացման գրաֆիկի երկու կետերի աղյուսակային տվյալները. 0,3 պլաստիկ դեֆորմացմանը համապատասխան լարումը՝ 160 ՄՊա և 0,5 – ին՝ 180 ՄՊա: SIMULIA ծրագրային միջավայրում տարրերի բաժանված ցանցի պարամետրերն են. կետերի քանակը՝ 225, տարրերի քանակը՝ 192 և քառանկյուն տարրերի տիպը՝ CAX4R:


Խնդրի լուծման արդյունքում ստացվել են լարվածադեֆորմացիոն վիճակի բոլոր բաղադրիչները գլանի բաց միջասեղմման դեպքում, երբ տեղի է ունենում բացարձակ կոշտ մամլամատի տակ գլանի նյութի հավասար իջեցում: Նկ. 5 – ում գլանի առանցքային հատույթի կեսի վրա ցույց են տրված Միզենի (σ_i) և առանցքային ($\sigma_y = S22$) լարումների, ինչպես նաև $\varepsilon_i = \text{PEEQ}$ դեֆորմացումների ինտենսիվության ու նյութի V (ԱՕՄ) ծակոտկենության բաշխման գոտիները:




Լարումների ինտենսիվությունը



Առանցքային լարումները



Դեֆորմացումների ինտենսիվությունը



Նյութի ծակոտկենությունը


Նկ. 5. Տվյալները՝ տեղափոխություններով լուծված գլանի բաց միջասեղման դեպքում

Աղ. 2 – ում բերված են մամլամատի ազդման գլանի վերևի եզրից հաշված առանցքի 10 և արտաքին եզրի 10, ինչպես նաև գլանի առանցքից հաշված վերևի եզրի 9 կետերում համապատասխան լարումների մեծությունների և միջին $\sigma_0 = (\sigma_y + \sigma_r + \sigma_\theta) / 3$ լարման արժեքները, որտեղ σ_r, σ_θ - շառավղային և շրջանային լարումներն են: Ընդ որում, σ_0 - ի արժեքները հետագայում հնարավորություն կտան վերլուծական մեթոդով որոշել ընթացիկ ծակոտկենության մեծությունները, V (ՀԱՇ):

Լարվածադեֆորմացիոն վիճակի բաղադրիչների տվյալները


Առանցքի կետերը	S, Mises, ՄՊա	S, S22, ՄՊա	σ_0 , Մպա	PEEQ	V (ԱԾՄ)	V (ՀԱՇ)
1	120	-194	-114	0,167	0,127	-0,064
2	123	-195	-113	0,194	0,121	-0,103
3	131	-195	-107	0,268	0,107	-0,187
4	142	-188	-93	0,355	0,098	-0,215
5	147	-176	-79	0,393	0,104	-0,169
6	141	-167	-73	0,362	0,121	-0,123
7	131	-159	-72	0,285	0,142	-0,060
8	124	-149	-67	0,191	0,165	0,037
9	120	-135	-55	0,107	0,184	0,126
10	119	-117	-38	0,049	0,195	0,177
Վերնի կետերը						
1	120	-194	-114	0,167	0,127	-0,064
2	119	-202	-123	0,180	0,122	-0,119
3	118	-221	-145	0,221	0,106	-0,300
4	140	-278	-190	0,396	0,064	-1,106
5	161	-230	-173	0,624	0,048	-1,689
6	139	-28	-39	0,705	0,065	-0,145
	139	-28	-39	0,053	0,207	0,178
7	118	22	29	0,041	0,204	0,214
8	118	-13	28	0,026	0,202	0,209
9	117	11	42	0,023	0,203	0,212
Եզրի կետերը						
1	117	11	42	0,023	0,203	0,212
2	117	10	40	0,027	0,203	0,213
3	117	14	41	0,034	0,204	0,217
4	117	16	42	0,039	0,205	0,220
5	118	7	37	0,041	0,204	0,218
6	119	-11	30	0,039	0,203	0,214
7	120	-35	18	0,037	0,201	0,208
8	121	-61	4	0,035	0,199	0,202
9	121	-84	-11	0,034	0,198	0,196
10	120	-103	-25	0,033	0,197	0,190

Նյութի ծակոտկենության բաշխման գոտիների տվյալները ցույց են տալիս, որ նյութի խտացման գործընթացը մամլամատի տակ հիմնականում իրականացվում է անհավասարաչափ (նկ. 6), և մամլամատի եզրին մոտ նյութի $v_0=0,2$ սկզբնական ծակոտկենության մեծությունը փոքրանալով դառնում է $v_{\min}=0,048$: Նշենք, որ նկ. 5 և 6-ում բերված նյութի ծակոտկենության բաշխման գոտիների տեսքերը նույնպես լավ համապատասխանում են նկ. 1-ի տվյալներին:



Նկ. 6. Մամլամատի տակ նմուշի հսկման տեղում նյութի V ընթացիկ ծակոտկենության տվյալները

Ուսումնասիրվել է նաև ծակոտկենության բաշխումը նմուշի կենտրոնական առանցքի ուղղությամբ: Առաջին 10 հանգույցների տվյալներով կառուցվել է V ծակոտկենությունների բաշխման գրաֆիկը (նկ. 7):




Նկ. 7. Նմուշի առանցքով նյութի V ընթացիկ ծակոտկենության բաշխման տվյալները

Այժմ քննարկենք վերլուծական մեթոդով ծակոտկենության հաշվառման առանձնահատկությունները: Դրա համար օգտագործվում է [4] – ի մեթոդը: Ծակոտկեն նյութերի պլաստիկության դեֆորմացիոն տեսության (ՄՆՊԴՏ) հավասարումների ընթացիկ V (ՀԱՇ) ծակոտկենության որոշման բանաձևն արտահայտվում է նյութի սկզբնական ծակոտկենությամբ՝ ν_0 , միջին σ_0 լարումով, $\mathcal{E}_i = \text{PEEQ}$ դեֆորմացումների ու σ_i լարումների ինտենսիվություններով և ունի հետևյալ տեսքը՝


$$V(\text{ՀԱՇ}) = \nu = 1 - (1 - \nu_0) \exp\left(-9\nu_0^m \sigma_0 \mathcal{E}_i / \sigma_i\right): \quad (1)$$

Օգտագործելով «ABAQUS» ԱՕՄ-ում լարվածադեֆորմացիոն վիճակի բաղադրիչների տվյալները՝ որոշվել են ընթացիկ V (ՀԱՇ) ծակոտկենության մեծությունները (աղ. 2), և դրանց հիման վրա կառուցվել են նկ. 8-10 –ի գրաֆիկները: Ընդ որում, 1-ով նշված կորերին համապատասխանում են V (ԱՕՄ) –ում որոշված տվյալները, իսկ 2-ով նշված բարակ գծերով բացասական արժեքներով կորերին՝ V (ՀԱՇ) –ի արդյունքները: Ինչ վերաբերում է 3 –րդ՝ հաստ գծերով զրո արժեքներով կորերին (V ԻՐԱԿԱՆ), ապա հաշվի է առնվել այն հանգամանքը, որ չի կարող լինել բացասական արժեքներով ծակոտկենություն: Այսինքն՝ ըստ ծակոտկենության որոշման (1) բանաձևի՝ այդ կետերում եռակալված նյութը ամբողջապես խտացել է:


Նշենք, որ V (ԱՕՄ)–ում և V (ՀԱՇ)–ով ծակոտկենության որոշման արդյունքները որակապես նկարագրում են եռակալված նյութի խտացման գործընթացը, այն դեպքում, երբ քանակական տվյալների միջև որոշ դեպքերում կան տարբերություններ: Դա բացատրվում է նյութերի սկզբնական տվյալների տարբերությամբ, որն անհրաժեշտ կլինի հետագայում ուսումնասիրել:



Նկ. 8. Մամլամատի տակ նմուշի հպման տեղում նյութի V ընթացիկ ծակոտկենության բաշխումը՝ ըստ ԱՕՄ-ի (1 կորը) և ըստ ծակոտկենության տեսական բանաձևի (2 և 3 կորերը)



Նկ. 9. Նմուշի առանցքի ուղղությամբ նյութի V ընթացիկ ծակոտկենության բաշխումը՝ ըստ ԱՕՄ-ի (1 կորը) և ըստ ծակոտկենության տեսական բանաձևի (2 և 3 կորերը)



Նկ. 10. Նմուշի եզրով նյութի V ընթացիկ ծակոտկենության բաշխումը ըստ ԱՕՄ-ի (1 կորը) և ըստ ծակոտկենության տեսական բանաձևի (2 կորը)

Եզրակացություն

1. Հոծ և եռակալված նյութերից գլանական նմուշների բացարձակ կոշտ մամլամատով բաց միջասեղման գործընթացների մոդելավորումը և լարվածադեֆորմացիոն վիճակների հետազոտումն իրականացվում են ԱՕՄ-ում:

2. Հոծ նյութից պատրաստված գլանի դեպքում մամլամատի տակ նմուշի նյութի հավասար իջեցման համար օգտագործվում է շառավղի ուղղությամբ երեք տարբեր ճնշում հաղորդող երեք կոշտ գլանական մասերից բաղկացած մամլամատ: Ընդ որում, քննարկվել են միայն առաջին պլաստիկ դեֆորմացման առաջացման արդյունքները, և դրանք բավականին լավ համընկնում են գրականությունում նշված տվյալների հետ:

3. Եռակալված նյութից գլանի դեպքում նմուշի հավասար իջեցումն ապահովվում է մամլամատի տակ նյութի համապատասխան կետերի առանցքի ուղղությամբ հավասար տեղափոխությամբ: Գլանի բավականին մեծ պլաստիկ դեֆոր-

մացման դեպքի լարվածադեֆորմացիոն վիճակների հետազոտման հետ միասին ուսումնասիրվում են նաև նյութի V(ԱՕՄ) ծակոտկենության բաշխման գոտիները:

4. Օգտագործելով ԾՆՊՂՏ հավասարումների ընթացիկ V(ՀԱՇ) ծակոտկենության որոշման բանաձևը՝ հաշվարկվել են դեֆորմացված եռակալված նյութերից գլանի ընթացիկ ծակոտկենության մեծությունները: Ցույց է տրվել, որ V(ԱՕՄ)-ում V ՀԱՇ-ով ծակոտկենության որոշման արդյունքները որակապես նկարագրում են եռակալված նյութի խտացման գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Петросян Г.Л.** Пластическое деформирование порошковых материалов. - М.: Металлургия, 1988.-153с.
2. **Сторожев М.В., Попов Е.А.** Теория обработки металлов давлением. - М.: Машиностроение, 1971. -421 с.
3. **Петросян Г.Л., Мусаелян Г.В.** Исследование влияния схемы деформирования на уплотняемость спеченных цилиндрических заготовок // Известия вузов. Машиностроение.- 1983. - N10.- С. 102-105.
4. **Պետրոսյան Գ.Լ., Խաչատրյան Հ.Հ., Պետրոսյան Հ.Գ., Մարգարյան Մ.Ա.** Կոնական մամլամայրում գլանական եռակալված ձողի հակաճնշմամբ մամլման գործընթացի «ABAQUS»-ով մոդելավորումը // ՀԱՊՀ ԼՐԱԲԵՐ. Գիտական հոդվածների ժառանգություն. - Երևան: Ճարտարագետ, 2015. – Մաս 2. – Էջ 295-301:
5. **Петросян Г.Л., Петросян А.С. Левонян Г.Л.** Усовершенствование инженерного метода использования формулы для определения пористости спеченных материалов // Материалы секции “Наука и технологии будущего” Международного конгресса, посвященного 160-летию со дня рождения выдающегося русского инженера В.Г. Шухова, 17-18 апреля 2014 года. – М.: МГТУ им. Н.Э. Баумана, 2014.- С. 211-217.
6. Моделирование процесса прессования круглого стержня в конической матрице в условиях больших противодавлений / **Г.Л. Петросян, Г.Г. Хачатрян, М.Б. Сафарян и др.** // Вестник НПУА: Механика, машиноведение, машиностроение.- 2015 - N1. - С. 26-35.
7. **Томсен Э., Янг Ч., Кобаяши Ш.** Механика пластических деформаций при обработке металлов. - М.: Машиностроение, 1969. - 504с.

ՀԱՊՀ, Մեխանիկամեքենաշինական, տրանսպորտային համակարգերի և դիզայնի ինստիտուտ: Նյութը ներկայացվել է տպագրության 15.04.2017:

Г.Л. ПЕТРОСЯН, М.А. МАРГАРЯН, Г.А. ГАЛОЯН

**КОМПЬЮТЕРНОЕ МОДЕЛИРОВАНИЕ ОТКРЫТОЙ ПРОШИВКИ
СПЛОШНОГО И СПЕЧЕННОГО ОБРАЗЦОВ КРУГЛОГО СЕЧЕНИЯ**

Проведено моделирование и исследование напряженно-деформированного состояния открытой прошивки цилиндрических образцов из сплошного и спеченного материалов в автоматизированной программной среде, когда под абсолютно жестким пуансоном происходит равное снижение материала образца. В случае цилиндра из сплошного материала это снижение осуществляется с использованием пуансона, который состоит из трех твердых цилиндрических частей, передающих по направлению радиуса три разных давления, при этом обсуждаются данные возникновения только первой пластической деформации. В случае цилиндра из спеченного материала равное снижение материала образца под пуансоном обеспечивается равным перемещением соответствующих точек материала по направлению оси образца. Путем исследования данных довольно большой пластической деформации цилиндра изучаются зоны распределения пористости материала.

Ключевые слова: сплошной и спеченный материалы, открытая прошивка цилиндра, напряженно-деформированное состояние, осесимметричная деформация, среднее напряжение, пористость.

G.L. PETROSYAN, M.A. MARGARYAN, H.A. GALOYAN

**COMPUTER MODELING OF THE OPEN BROACHING PROCESS OF THE
ROUND SECTION SOLID AND SINTERED SAMPLES**

Modeling and investigation of the stress-strain state of open broaching of solid and sintered cylindrical samples in an automatic program environment are carried out when under an absolutely rigid punch, an equal decrease of the sample material occurs. In the case of solid-material cylinder that decrease is implemented by using a punch which consists of three hard cylindrical parts which transmit three different pressures in the radial direction. At that, only the data on the emergence of the first plastic deformation are discussed. In the case of a cylinder from a sintered material, an equal reduction in the material of the sample under the punch is ensured by an equal displacement of the corresponding points of the material along the direction of the sample axis. At the same time, by studying the data on a rather large plastic deformation of the cylinder, the distribution zones of porosity of the material are also studied.

Keywords: solid and sintered material, open broaching of cylinder, stress-strain state, axis-symmetric deformation, average stress, porosity.

А.А. СААКЯН

ВЛИЯНИЕ МЕСТА РАСПОЛОЖЕНИЯ ОПОРЫ НА ВЕЛИЧИНУ КРИТИЧЕСКОЙ НАГРУЗКИ СЖАТОГО СТЕРЖНЯ

Рассматривается задача устойчивости прямолинейного стержня, закрепленного на одном конце и сжимаемого на другом конце центральной осевой нагрузкой, при наличии дополнительной опоры. Рассмотрены три случая закрепления конца стержня: шарнирное, жесткое и скользящее, а также случаи как консервативной силы, так и следящей силы. Получены зависимости критической сжимающей нагрузки от места расположения дополнительной опоры.

Ключевые слова: стержень, устойчивость, промежуточная опора, консервативная сила, следящая сила.

Введение. Задача устойчивости центрально-сжатого упругого стержня была сформулирована и решена еще в XVIII веке Л. Эйлером. Однако до настоящего времени интерес к этой, кажется, простой задаче не ослабевает ввиду широкой ее распространенности как в инженерных конструкциях, так и в природе [1-5]. Задачи оптимизации устойчивости сжатого упругого стержня по критерию минимального веса исследованы достаточно полно [6]. Из исследований, относящихся к задачам оптимизации на основе определения места расположения опоры, можно указать работы [7,8]. В [9] решена задача устойчивости закрепленного по концам двухкомпонентного составного стержня под действием осевой сосредоточенной силы, приложенной в точке раздела материалов, и выявлена зависимость величины критической силы от отношения изгибных жесткостей составных частей стержня.

В настоящей работе проводится исследование характера изменения величины критической нагрузки в зависимости от места расположения опоры. Установлено, что задача не имеет оптимального решения.

Постановка задачи. Пусть стержень постоянного поперечного сечения, закрепленный на одном конце, сжат силой P . Предполагается возможность установки точечной опоры, ограничивающей поперечное смещение стержня в этой точке (рис. 1).



Рис.1. Схематическое представление задачи

При заданной длине стержня l требуется определить место расположения опоры, т.е. найти множитель $0 < \delta < 1$, при котором критическая нагрузка, приводящая к потере устойчивости, будет наибольшей.

Уравнение устойчивости для каждой из частей стержня имеет вид [10]

$$\frac{d^4 w_i}{dx^4} + \alpha^2 \frac{d^2 w_i}{dx^2} = 0 \quad (i=1,2), \quad \alpha^2 = \frac{P}{EJ}, \quad (1)$$

где w_1 – поперечное перемещение (прогиб) на отрезке $0 \leq x \leq \delta l$, а w_2 – то же, на отрезке $\delta l \leq x \leq l$; P – сжимающая нагрузка; E – модуль упругости материала стержня; J – момент инерции поперечного сечения относительно оси Ox .

Предполагается, что на опоре, т.е. в точке раздела $x = \delta l$ частей стержня, выполняются условия равенства нулю прогиба с обеих сторон, а также условия равенства между собой углов поворота и изгибающих моментов:

$$w_1 = 0, \quad w_2 = 0, \quad \frac{dw_1}{dx} = \frac{dw_2}{dx}, \quad \frac{d^2 w_1}{dx^2} = \frac{d^2 w_2}{dx^2} \quad (x = \delta l). \quad (2)$$

Общее решение уравнения (1), очевидно, имеет вид

$$w_i = A_i + B_i x + C_i \sin \alpha x + D_i \cos \alpha x \quad (i=1,2).$$

Шарнирное закрепление. Удовлетворяя условиям шарнирного закрепления конца $x = 0$:

$$w_1 = 0, \quad \frac{d^2 w_1}{dx^2} = 0 \quad (x = 0)$$

и условиям непрерывности (2), будем иметь

$$w_1 = C_1 \left(\sin \alpha x - \frac{x}{\delta l} \sin \alpha \delta l \right), \quad (3)$$

$$w_2 = \frac{(C_1 - C_2)}{\cos \alpha \delta l} [\sin \alpha \delta l \cos \alpha x - \alpha \delta l + \alpha x] - \frac{x}{\delta l} C_1 \sin \alpha \delta l + C_2 \sin \alpha x.$$

Произвольные постоянные C_1 и C_2 подлежат определению из граничных условий на конце $x = l$. Поскольку этот конец свободен относительно перемещений и подвержен действию лишь осевой нагрузки, то имеем условия на изгибающий момент и перерезывающую силу:

$$\frac{d^2 w_2}{dx^2} = 0; \quad \frac{d^3 w_2}{dx^3} + \kappa \frac{dw_2}{dx} = 0 \quad (x = l). \quad (4)$$

При $\kappa = \alpha^2$ будем иметь случай консервативной нагрузки, а при $\kappa = 0$ - случай следящей нагрузки.

Подставляя второе из представлений (3) в условия (4), получим однородную систему линейных алгебраических уравнений

$$\begin{aligned} & \operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha l C_1 - (\operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha l - \sin \alpha l) C_2 = 0, \\ & C_1 \left\{ (\alpha^2 - \kappa) \operatorname{tg} \alpha \delta l \sin \alpha l + \kappa \left[\frac{1}{\cos \alpha \delta l} - \frac{\sin \alpha \delta l}{\alpha \delta l} \right] \right\} + \\ & + C_2 \left\{ -(\alpha^2 - \kappa) (\operatorname{tg} \alpha \delta l \sin \alpha l + \cos \alpha l) - \frac{\kappa}{\cos \alpha \delta l} \right\} = 0. \end{aligned} \quad (5)$$

Приравняв детерминант матрицы системы (5) к нулю, получим следующее трансцендентное уравнение для определения критической нагрузки, приводящей к потере устойчивости, в зависимости от места расположения опоры:

$$-(\alpha^2 - \kappa) \operatorname{tg} \alpha \delta l + \kappa \frac{\sin \alpha \delta l \sin \alpha (1 - \delta) l - \alpha \delta l \sin \alpha l}{\alpha \delta l \cos \alpha \delta l} = 0. \quad (6)$$

В случае консервативной нагрузки ($\kappa = \alpha^2$) уравнение (6) примет вид

$$\alpha \delta l \sin \alpha l - \sin \alpha \delta l \sin \alpha (1 - \delta) l = 0, \quad (7)$$

а в случае следящей нагрузки ($\kappa = 0$):

$$\operatorname{tg} \alpha \delta l = 0. \quad (8)$$

Жесткое защемление. Удовлетворяя условиям жесткого защемления конца $x=0$:

$$w_1 = 0, \quad \frac{dw_1}{dx} = 0 \quad (x=0) \quad (9)$$

и условиям непрерывности (2), будем иметь

$$\begin{aligned} w_1 &= C_1 \left[(\alpha \delta l - \sin \alpha \delta l) \frac{1 - \cos \alpha x}{1 - \cos \alpha \delta l} - \alpha x + \sin \alpha x \right], \\ w_2 &= C_2 \left\{ \frac{\alpha (\delta l - \alpha x)}{\cos \alpha \delta l} + \sin \alpha x - \operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha x \right\} + \\ &+ C_1 \left\{ -\frac{\alpha \delta l}{\cos \alpha \delta l} + \frac{(\alpha \delta l - \sin \alpha \delta l)}{1 - \cos \alpha \delta l} + \alpha x \frac{1 - \cos \alpha \delta l}{\cos \alpha \delta l} + \right. \\ &\quad \left. + \operatorname{tg} \alpha \delta l \frac{(1 - \alpha \delta l \operatorname{ctg} \alpha \delta l)}{1 - \cos \alpha \delta l} \cos \alpha x \right\}. \end{aligned} \quad (10)$$

Удовлетворяя вторым из представлений (10) условиям (4), получим однородную систему линейных алгебраических уравнений

$$\begin{aligned} C_1 \frac{(\alpha \delta l - \operatorname{tg} \alpha \delta l)}{1 - \cos \alpha \delta l} \cos \alpha l + C_2 (-\sin \alpha l + \operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha l) &= 0, \\ C_1 \left\{ \alpha \kappa \frac{1 - \cos \alpha \delta l}{\cos \alpha \delta l} + \alpha (\kappa - \alpha^2) \frac{\alpha \delta l - \operatorname{tg} \alpha \delta l}{1 - \cos \alpha \delta l} \sin \alpha l \right\} + \\ + C_2 \left\{ -\frac{\alpha \kappa}{\cos \alpha \delta l} + \alpha (\kappa - \alpha^2) (\cos \alpha l + \operatorname{tg} \alpha \delta l \sin \alpha l) \right\} &= 0. \end{aligned}$$

Приравняв детерминант матрицы последней системы к нулю, получим следующее трансцендентное уравнение:

$$\begin{aligned} \kappa [-2\alpha \delta l \cos \alpha l + 3 \sin \alpha l + \sin \alpha (1 - 2\delta)l - 4 \sin \alpha (1 - \delta)l] + \\ + 2(\kappa - \alpha^2) [\alpha \delta l \cos \alpha \delta l - \sin \alpha \delta l] = 0. \end{aligned} \quad (11)$$

В случае консервативной нагрузки ($\kappa = \alpha^2$) уравнение (11) примет вид

$$-2\alpha \delta l \cos \alpha l + 3 \sin \alpha l + \sin \alpha (1 - 2\delta)l - 4 \sin \alpha (1 - \delta)l = 0, \quad (12)$$

а в случае следящей нагрузки ($\kappa = 0$):

$$\alpha \delta l \cos \alpha \delta l - \sin \alpha \delta l = 0. \quad (13)$$

Скользкая заделка. Удовлетворяя условиям скользящей заделки конца $x = 0$:

$$\frac{d^3 w_1}{dx^3} = 0, \quad \frac{dw_1}{dx} = 0 \quad (x = 0)$$

и условиям непрерывности (2), будем иметь

$$\begin{aligned} w_1 &= C_1 (\alpha \delta l - \alpha x - \sin \alpha \delta l + \sin \alpha x), \\ w_2 &= C_1 \left\{ -\frac{1 - \cos \alpha \delta l}{\cos \alpha \delta l} (\alpha \delta l - \alpha x) - \sin \alpha \delta l + \operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha x \right\} + \\ &+ C_2 \left\{ \frac{1}{\cos \alpha \delta l} (\alpha \delta l - \alpha x) + \sin \alpha x - \operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha x \right\}. \end{aligned}$$

Удовлетворяя условиям (4), будем иметь

$$\begin{aligned} C_1 \operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha l + C_2 \{ \sin \alpha l - \operatorname{tg} \alpha \delta l \cos \alpha l \} = 0, \\ C_1 \left\{ (\alpha^2 - \kappa) \operatorname{tg} \alpha \delta l \sin \alpha l + \kappa \frac{1 - \cos \alpha \delta l}{\cos \alpha \delta l} \right\} - \\ - C_2 \left\{ (\alpha^2 - \kappa) (\cos \alpha l + \operatorname{tg} \alpha \delta l \sin \alpha l) + \kappa \frac{1}{\cos \alpha \delta l} \right\} = 0. \end{aligned}$$

Приравняв определитель матрицы к нулю, получим

$$(\alpha^2 - \kappa) \sin \alpha \delta l + \kappa \{ \sin \alpha l - \sin \alpha (1 - \delta) l \} = 0.$$

При $\kappa = 0$ (следящая нагрузка) критическая нагрузка определяется из уравнения

$$\sin \alpha \delta l = 0 \quad (14)$$

и дается формулой

$$\alpha = \frac{\pi}{\delta l}.$$

При $\kappa = \alpha^2$ (консервативная нагрузка) критическая нагрузка определяется из уравнения

$$\sin \alpha l - \sin \alpha (1 - \delta) l = 0 \quad (15)$$

и дается формулой

$$\alpha = \frac{\pi}{l(2 - \delta)}.$$

Численный анализ. Учитывая обозначение в (1), численный анализ и выводы будут делаться относительно параметра α , называя его при этом критической нагрузкой.

Рассмотрим крайние положения опоры. Пусть опора вплотную подходит к закрепленному концу стержня ($\delta \rightarrow 0$). Тогда, независимо от вида закрепления этого конца, будем иметь задачу устойчивости стержня с жестко закрепленным концом, критическая консервативная нагрузка для которой известна [10] и равна

$$\alpha = \frac{\pi}{2l}. \quad (16)$$

Анализируя поведение уравнений (7), (12) и (15) при $\delta \rightarrow 0$, нетрудно найти, что все эти три уравнения переходят в уравнение $\cos \alpha l = 0$, решением которого является (16). Для следящей нагрузки уравнения (8), (13) и (14) дают только нулевое решение.

В случае расположения опоры на свободном конце стержня ($\delta \rightarrow 1$) понятия “консервативная нагрузка” и “следящая нагрузка”, очевидно, совпадают, из уравнений (7) и (8), а также (14) и (15) получаем уравнение $\sin \alpha l = 0$, решением которого является $\alpha = \frac{\pi}{l}$, совпадающее с известным [10] результатом для шарнирно опертого по концам стержня.

Из уравнений же (12) и (13) получим уравнение

$$\alpha l \cos \alpha l - \sin \alpha l = 0,$$

решением которого является

$$\alpha = \frac{4.493409457\dots}{l} \approx \frac{\pi}{0.7l},$$

совпадающее с известным результатом [10] для стержня, жестко закрепленного на одном конце и шарнирно опертого на другом.

При промежуточных расположениях опоры зависимости критической консервативной нагрузки от расположения опоры представлены на рис.2. Индексом “1” отмечен график зависимости для шарнирно опертого конца, индексом “2” - для защемленного края, а индексом “3” - для скользяще заделанного края.




Рис. 2. Кривые зависимости критической нагрузки от места расположения опоры при разных условиях закрепления конца стержня

Для следящей нагрузки зависимости критической нагрузки от расположения опоры представляются аналитически:

$$\alpha l = \frac{\pi}{\delta} \quad - \text{ для шарнирно закрепленного конца и скользящей заделки;}$$

$$\alpha l = 4.493409457... \approx \frac{\pi}{0.7\delta} \quad - \text{ для защемленного конца.}$$

Очевидно, что в последних формулах уменьшение δ ограничивается условием прочности стержня

$$\sigma = \frac{P}{S} < [\sigma],$$

где S - площадь поперечного сечения; $[\sigma]$ - допускаемое напряжение на сжатие.

Закключение. Исследовано влияние промежуточной точечной опоры на величину критического усилия, вызывающего потерю устойчивости центрально-сжатого упругого стержня, при различных условиях закрепления одного его конца. Показано, что при расположении опоры близко к свободному концу стержня даже при следящей нагрузке возможна потеря устойчивости, причем величина критической следящей нагрузки всегда превосходит критическую консервативную нагрузку. Показано также, что при любом месте расположения опоры критическая консервативная нагрузка для стержня с защемленным концом превосходит подобное значение для стержня с шарнирно закрепленным концом, а последнее превосходит значение для стержня со скользяще заделанным концом.

Автор выражает искреннюю благодарность своему научному руководителю профессору М.В. Белубеяну за постановку задачи и ценные указания при выполнении работы.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. **Shan W. and Chen Z.** Mechanical instability of thin elastic rods // Journal of Postdoctoral Research. – 2013. – Vol.1, No. 2. – P. 1-8.
2. Microtubules can bear enhanced compressive loads in living cells because of lateral reinforcement /**C.P. Brangwynne, L. Mahadevan, S. Kumar, et al**// JCB, The Journal of Cell Biology. – 2006, Jun 5.- 173(5). – P.733-741.
3. **Xu F., Lu W., Zhu Y.** Controlled 3D Buckling of Silicon Nanowires for Stretchable Electronics // ACS Nano. – 2011.– 5 (1).– P. 672–678.
4. **Liu Y., Xue Y.** Some Aspects of Research on Mechanics of Thin Elastic Rod // The 4th Symposium on the Mechanics of Slender Structures (MoSS2013): Journal of Physics: Conference Series. – 2013. – Vol. 448, 012001 – doi:10.1088/1742-6596/448/1/012001.

5. Kolomiets L., Orobey V., Lymarenko A. Non-conservative problems of the stability of bar structures // Tech. Journal.- Hrcak, Croatia, 2015. – Vol.9, No3. – P. 311-316.
6. Баничук Н.В. Оптимизация форм упругих тел. – М.: Наука, 1980. – 256 с.
7. Гнуни В.Ц. Оптимальный выбор расположения опор в задачах изгиба, колебаний и устойчивости упругой балки // В сб.: Вопросы оптимального управления, устойчивости и прочности механических систем. – Ереван: Изд. ЕГУ, 1997. – С.115-120.
8. Гнуни В.Ц., Элоян А.В. Оптимальный выбор расположения опор в задаче изгиба прямоугольной пластинки // Изв. НАН РА. Механика. –2001. – Т.54, №3. – С.14-17.
9. Lee G.E., Reissner E. Note on a problem of beam buckling // Journal of Applied Mathematics and Physics (ZAMP).– 1975. – 26.–P. 839.–doi:10.1007/BF01596086
10. Вольмир А.С. Устойчивость деформируемых систем.– М.: Наука, 1967.– 984 с.

Институт механики НАН РА. Материал поступил в редакцию 05.02.2017.

Ա.Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

ՀԵՆԱՐԱՆԻ ԴԻՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՎԱԾ ՁՈՂԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հետազոտվել է մեկ ծայրով ամրակցված և մյուս ծայրից կենտրոնական առանցքային բեռով սեղմվող ուղղաձիգ ձողի կայունության խնդիրը, երբ առկա է լրացուցիչ միջանկյալ հենարան: Դիտարկվել են ամրակցման երեք տարբեր պայմաններ՝ հողակապ, կոշտ ամրացում և սահող ամրացում, ինչպես նաև տարբեր բեռներ՝ կոնսերվատիվ և հետևող: Ստացվել են սեղմող կրիտիկական բեռի կախվածությունները լրացուցիչ հենարանի դիրքավորման տեղից:

Առանցքային բեռեր. ձող, կայունություն, միջանկյալ հենարան, կոնսերվատիվ ուժ, հետևող ուժ:

A.A. SAHAKYAN

THE INFLUENCE OF THE SUPPORT LOCATION ON THE VALUE OF CRITICAL LOAD OF THE COMPRESSED BAR

The stability problem of a straight bar with one fixed end, and compressed by a central axial load at the other end at an additional support is considered. Three cases of end-fixing: swivel support, fully fixed and slide bush, as well as different loads: conservative and follower are considered. The dependences of the critical compressive load on the location of additional support are obtained.

Keywords: bar, stability, intermediate support, conservative force, follower force.

Ա.Ղ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԼՈՐ ՀԱՏՈՒՅԹՈՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇԻ ՄԵՂՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԾԱԿՈՏԿԵՆ ՆՅՈՒԹԻ ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ՀՈՍՈՒՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅԱՄԲ

Օգտագործվել են ծակոտկեն նյութերի պլաստիկության հոսունության տեսության ծակոտկենության որոշման և կլոր հատույթով փորձանմուշի ճակատներում շփման սահքի դեպքում հպակային նորմալ ճնշման չափում չունեցող բանաձևերը: EXCEL ծրագրային միջավայրում կատարված թվային հաշվարկների հիման վրա որոշվել են ծակոտկենության աճի, ինչպես նաև ծակոտկենության արժեքները լայնական հատույթի տարբեր կետերում, և դրանք համեմատվել են ծակոտկեն նյութի պլաստիկության դեֆորմացիոն տեսությամբ ստացված տվյալների հետ:

Առանցքային բառեր. գլանական փորձանմուշ, եռակալված նյութ, նստեցում, հպակային նորմալ ճնշում, սահք, ծակոտկենություն:

Ներկայումս հոծ, եռակալված և չեռակալված փոշենյութերի ճնշմամբ մշակմամբ ստացվում են տնտեսության տարբեր բնագավառներում օգտագործվող մեխանիկական և շահագործական բարձր հատկություններ ունեցող առարկաներ և մեքենամասեր [1,2]: Հայտնի է, որ ծակոտկեն նյութերի հիմնական փորձարկման մեթոդը կլոր հատույթով փորձանմուշների սեղմման փորձարկումն է: Այն հնարավորություն է տալիս որոշել եռակալված նյութի իրական մեխանիկական հատկությունները՝ նյութի ծակոտկենության պարամետրերը, և կառուցել դրա դեֆորմացման գրաֆիկը [3]:

[4]-ում կլոր հատույթով փորձանմուշի հպակային մակերևույթներում շփման տարբեր դեպքերում նստեցման գործընթացի [1,2] լարվածադեֆորմացիոն վիճակը հետազոտվել է փորձարկման տարբեր գործոնների հաշվառմամբ՝ ըստ դրա դեֆորմացման աստիճանի, չափերի և ծակոտկենության: Փորձանմուշի ճակատներում՝ արտաքինում սահքի շփումը ու կենտրոնում կայունը համակցելով՝ ստացվել է տարբեր նյութերի համար կիրառելի հպակային նորմալ ճնշման չափում չունեցող բանաձև:

Եռակալված փորձանմուշի ծակոտկենության փոփոխման արժեքների որոշման համար օգտագործվել է ծակոտկեն նյութերի պլաստիկության դեֆորմացիոն մոտավոր տեսության համաձայն ծակոտկենության որոշման բավականին պարզ բանաձև [3], որում արտացոլված է նյութի սկզբնական ծակոտկենությունը: Ուստի ստացված արդյունքները մոտավոր են: Նշենք, որ [2]-ում Wolfram Mathematica

ծրագրային միջավայրում կատարված թվային հաշվարկների հիման վրա որոշվել են հպակային ճնշման և ծակոտկենության արժեքները լայնական հատույթի տարբեր կետերում:

Այսպիսով, եռակալված փոշենյութերում ծակոտկենության և հպակային մակերեսներում շփման առկայության պարագայում այդ հարցերը գլանական փորձանմուշների սեղմման դեպքում լիովին հետազոտված չեն: Հետևաբար, նյութի ծակոտկենության հաշվառմամբ կլոր հատույթով փորձանմուշների լարվածադեֆորմացիոն վիճակի հետազոտումը՝ դրանց հպակային մակերևույթների վրա սահքի շփման ազդեցության դեպքում, օգտագործելով ավելի ճշգրիտ պլաստիկության տեսություն, հիմնավորում է տվյալ աշխատանքի արդիականությունը:

Աշխատանքի նպատակը կլոր հատույթով եռակալված փորձանմուշի առանցքային սեղմման գործընթացի, հպակային մակերևույթների վրա սահքի դեպքում, հետազոտումն է՝ ծակոտկեն նյութերի պլաստիկության հոսունության տեսության (ՄՆՊՀՏ) հիման վրա:

Խնդիրը լուծվում է հետևյալ հաջորդականությամբ.

1. Դիտարկվել է d_0 և H_0 չափերով գլանային փորձանմուշի նստեցման խնդիրը՝ F սեղմող ուժի դեպքում, երբ դեֆորմացումից հետո դրանք դարձել են d և H : Խնդրի լուծումն իրականացվում է [5]–ի մեթոդով՝ իդեալական կոշտ – պլաստիկ նյութի համար հպակային մակերեսներում սահքի շփման առկայության դեպքում ընդունելով շրջանային ε_θ և շառավղային ε_r դեֆորմացումների հավասարությունը, ինչից հետևում է նաև σ_θ շրջանային և σ_r շառավղային լարումների հավասարությունը՝

$$\sigma_r = \sigma_\theta:$$

Ընդունվում է, որ սահքի շփման առկայության դեպքում փորձանմուշի հպակային մակերեսների վրա առաջանում են, նորմալ լարումների համեմատ, փոքր $\tau_{ry} = q$ շոշափող լարումներ: Այդ դեպքում դեֆորմացիոն և լարվածային վիճակների բաղադրիչները՝ գլխավոր լարումներով և դեֆորմացումներով արտահայտված, հետևյալն են.

$$\begin{aligned} \varepsilon_1 = \varepsilon_2 = \varepsilon_r = \varepsilon_\theta = \varepsilon/2, \varepsilon_3 = \varepsilon_y = -\varepsilon, \\ \sigma_1 = \sigma_2 = \sigma_r = \sigma_\theta \neq 0, \sigma_3 = \sigma_y = -p, \end{aligned} \quad (1)$$

որտեղ $\sigma_y = -p$ –ն փորձանմուշի առանցքի նկատմամբ հպակային նորմալ ճնշումն է:

Նշենք, որ (1)–ով դեֆորմացումների ստացման համար օգտագործվել է նյութի ծավալի անփոփոխ մնալու պայմանը: Այդ տվյալներով որոշվող դեֆորմացումների ε_i ինտենսիվության արժեքն է [1]՝

$$\varepsilon_i = \varepsilon: \quad (2)$$

(1) –ում բերված լարվածային վիճակի բաղադրիչները տեղադրելով σ_i լարումների ինտենսիվության [1] բանաձևի մեջ և գրելով Հուբեր-Միզեսի պլաստիկության պայմանը՝

$$\sigma_i = \sigma_h, \quad (3)$$

ինչը արտահայտվում է σ_r և σ_y -ով՝ $\sigma_r - \sigma_y = \sigma_h$, կամ (1)-ի համաձայն կստանանք.

$$\sigma_r + p = \sigma_h, \quad (4)$$

որտեղ σ_h -ն նյութի հոսունության սահմանի լարումն է:

2. Խնդիրը լուծելու համար օգտագործվում է գլանական փորձանմուշից անջատված տարրի հետևյալ հավասարակշռության հավասարումը [5].

$$d\sigma_r/dr = 2q/H,$$

որը (4) – ի հաշվառմամբ ընդունում է հետևյալ տեսքը՝

$$dp/dr = -2q/H: \quad (5)$$

(5) հավասարման լուծման համար անհրաժեշտ է նախօրոք ունենալ շոշափող $\tau_{ry} = q$ լարումների փոփոխման օրենքը: Խնդիրը լուծվում է սահքի գոտու համար՝ ընդունելով, որ հպակային մակերեսների վրա շոշափող լարումների q ինտենսիվությունը կախված է կոնտակտային p ճնշումից Կուլոնի օրենքով՝ $q = fp$ [5], որտեղ f – ը շփման գործակիցն է:

Այդ դեպքում (5) –ը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\frac{dp}{p} = -\frac{2f}{H} dr,$$

որն ինտեգրելով և օգտագործելով հետևյալ եզրային պայմանը, երբ $r = \frac{d}{2}$, $\sigma_r = 0$ կամ (4)-ի հիման վրա՝ $r = d/2$ $p = \sigma_h$, որոշվում են սահքի միջակայքում p –ն և դրա չափում չունեցող մեծությունը՝

$$p = \sigma_h \exp \left[\frac{2f}{H} (d/2 - r) \right], \bar{p} = \frac{p}{\sigma_h} = \exp \left[\frac{2f}{H} (d/2 - r) \right]:$$

Նշենք, որ գլանային նմուշի անսեղմելիության $H_0 d_0^2 = Hd^2$ պայմանից հետևում է՝ $d = d_0 \sqrt{H_0/H}$: Դա հնարավորություն է տալիս $\bar{p}$ - ի որոշման բանաձևը ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$\bar{p} = \frac{p}{\sigma_h} = \exp \left[f (H_0/H) \sqrt{H_0/H} (1 - 2r/d) / (H_0/d_0) \right], \quad (6)$$

ինչից երևում է փորձանմուշի սկզբնական չափերի՝ H_0/d_0 և նստեցման աստիճանի՝ H_0/H ազդեցությունը չափում չունեցող հպակային նորմալ ճնշման վրա:

3. Կլոր հատույթով նմուշի դեֆորմացման տարբեր աստիճաններում նյութի v_0 սկզբնական ծակոտկենության փոփոխության արժեքների համար օգտագործվում է ՄՆՊՀՏ-ն նյութի ծակոտկենության աճի որոշման հետևյալ բանաձևը [3].

$$dv = \frac{9v^m \sigma_0 \overline{d\varepsilon}_i}{(1-v)^{3n-1} \sigma_i}, \quad (7)$$

որտեղ $\sigma_0 = (\sigma_1 + \sigma_2 + \sigma_3)/3$ -ն միջին լարումն է, չամրացվող նյութի համար $\sigma_i = \sigma_n$, m և n -ը՝ ծակոտկենության պարամետրերը:

Հաշվի առնելով (1) առնչությունները և $\sigma_r + p = \sigma_n$ պլաստիկության պայմանը, $\overline{\sigma}_0$ - չափում չունեցող մեծությունը ներկայացվում է հետևյալ տեսքով՝

$$\overline{\sigma}_0 = (2\overline{\sigma}_r - \overline{p})/3 = 2/3 - \overline{p}: \quad (8)$$

Փորձանմուշի նստեցման $H_0/H = 1,1$ աստիճանի դեպքում՝ $\overline{\Delta\varepsilon}_i = \ln H_0/H = 0,1$: Հետևաբար, $\overline{\Delta\varepsilon}_i$ -ի տվյալ աճի դեպքում ծակոտկենության աճի համար (7)-ը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\Delta v = \frac{9 v^m \overline{\sigma}_0 \overline{\Delta\varepsilon}_i}{(1-v)^{3n-1}}: \quad (9)$$

Խնդրի լուծման համար օգտագործում ենք նաև հետևյալ բանաձևը [3]՝

$$v_i = v_{i-1} + \Delta v_i: \quad (10)$$

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում Δv - ի արժեքը կախված է գլանի շառավղով փոփոխվող ընթացիկ ծակոտկենության և չափում չունեցող $\overline{p}$ ճնշման մեծություններից:

4. Թվային հաշվարկները կատարվել են EXCEL ծրագրային միջավայրում՝ ընդունելով փորձանմուշի հպակային մակերեսներում շփման գործակիցը՝ $f = 0,1$, նստեցման աստիճանը՝ $H_0/H = 1,1$ ($\overline{\Delta\varepsilon}_i = \ln H_0/H = 0,1$) և նյութի սկզբնական ծակոտկենությունը՝ $v_0 = 0,1$ -ի, երբ $n = 0,25$, $m = 1$ [3]: Խնդիրը լուծվել է $d_0 = 20$ մմ, $H_0 = 25$ մմ չափերով փորձանմուշի նստեցման հաջարդական դեպքերի համար, ընդունելով, որ յուրաքանչյուր նստեցում իրականացվել է $\overline{\Delta\varepsilon}_i = 0,1$ չափով: Օգտվելով նաև վերը բերված $d = d_0 \sqrt{H_0/H}$ և $H_i/H_{i+1} = 1,1$ բանաձևերից՝ ստացվել են համապատասխանաբար d , H չափսերը, ինչպես նաև դրանց համապատասխան հարաբերությունները, որոնք ներկայացված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1

Նմուշի չափերը դեֆորմացման հաջորդական
դեպքերից հետո, երբ $d_0=25$ մմ, $H_0=20$ մմ

H_i , մմ	d_i , մմ	H_i/d_i
22,73	20,98	1,083
20,66	22,01	0,939
18,78	23,08	0,814
17,07	24,21	0,705

(6), (8)-(10) բանաձևերով փորձանմուշի նստեցման յուրաքանչյուր աստիճանի դեպքում որոշվել են համապատասխանաբար $\bar{p}$ -ի, $\bar{\sigma}_0$ -ի, Δv -ի և v -ի արժեքները: Դրանց հաշվարկները կատարվել են $0 \leq r \leq d/2$ միջակայքում՝ $\Delta r = d/16$ քայլով, և ստացված տվյալները բերված են աղ. 2-ում:

Աղյուսակ 2

Գլանի շառավղով փոփոխվող անչափ $\bar{p}$ ճնշման, $\bar{\sigma}_0$ միջին լարման, Δv և v ծակոտկենության փոփոխման և և դրանց ընթացիկ արժեքները

$d_1=20,98$ մմ, $H_1=22,73$ մմ									
r	0	$d_1/16$	$d_1/8$	$3d_1/16$	$d_1/4$	$5d_1/16$	$3d_1/8$	$7d_1/16$	$d_1/2$
r, մմ	0	1,311	2,623	3,934	5,245	6,556	7,868	9,179	10,49
$\bar{p}$	1,097	1,084	1,072	1,059	1,047	1,035	1,023	1,012	1,00
$\bar{\sigma}_0$	-0,430	-0,417	-0,405	-0,393	-0,381	-0,369	-0,357	-0,345	-0,333
Δv	-0,038	-0,037	-0,036	-0,034	-0,033	-0,032	-0,031	-0,030	-0,029
v_1	0,062	0,063	0,064	0,066	0,067	0,068	0,069	0,070	0,071
$d_2=22,01$ մմ, $H_2=20,66$ մմ									
r	0	$d_1/16$	$d_1/8$	$3d_1/16$	$d_1/4$	$5d_1/16$	$3d_1/8$	$7d_1/16$	$d_1/2$
r, մմ	0	1,376	2,751	4,127	5,503	6,878	8,254	9,629	11,01
$\bar{p}$	1,112	1,098	1,083	1,069	1,055	1,041	1,027	1,013	1,00
$\bar{\sigma}_0$	-0,446	-0,431	-0,416	-0,402	-0,388	-0,374	-0,360	-0,347	-0,33
Δv	-0,025	-0,024	-0,024	-0,023	-0,023	-0,022	-0,021	-0,021	-0,02
v_2	0,038	0,039	0,041	0,042	0,044	0,045	0,047	0,048	0,05
$d_3=23,08$ մմ, $H_3=18,78$ մմ									
r	0	$d_1/16$	$d_1/8$	$3d_1/16$	$d_1/4$	$5d_1/16$	$3d_1/8$	$7d_1/16$	$d_1/2$
r, մմ	0	1,443	2,885	4,328	5,77	7,213	8,655	10,098	11,54
$\bar{p}$	1,131	1,114	1,097	1,080	1,063	1,047	1,031	1,015	1,00
$\bar{\sigma}_0$	-0,464	-0,447	-0,430	-0,413	-0,397	-0,381	-0,365	-0,349	-0,33
Δv	-0,016	-0,016	-0,016	-0,016	-0,016	-0,015	-0,015	-0,015	-0,02
v_3	0,022	0,024	0,025	0,027	0,028	0,029	0,031	0,033	0,04

$d_4=24.21$ մմ, $H_4=17.07$ մմ									
r	0	$d_1/16$	$d_1/8$	$3d_1/16$	$d_1/4$	$5d_1/16$	$3d_1/8$	$7d_1/16$	$d_1/2$
$r, \text{ մմ}$	0	1,513	3,026	4,539	6,053	7,566	9,079	10,592	12,11
$\bar{p}$	1,152	1,132	1,112	1,093	1,073	1,055	1,036	1,018	1,00
$\bar{\sigma}_0$	-0,486	-0,465	-0,446	-0,426	-0,407	-0,388	-0,369	-0,351	-0,33
Δv	-0,0096	-0,0098	-0,01	-0,0102	-0,0103	-0,0104	-0,0104	-0,0105	-0,01
v_4	0,013	0,014	0,015	0,017	0,018	0,0196	0,021	0,023	0,03


Նշենք, որ փորձանմուշի դեֆորմացման առաջին աստիճանի դեպքում (9) բանաձևում v -ն հաստատուն է (կախված չէ r -ից) և հավասար է նյութի v_0 սկզբնական ծակոտկենությանը: Ընդ որում, նմուշի ընթացիկ r շառավիղներին համապատասխան ընթացիկ v_i ծակոտկենությունները մեկը մյուսից տարբեր են և բավականին փոքրացել են: Դրանք հանդիսանալու են փորձանմուշի դեֆորմացման երկրորդ աստիճանի համար սկզբնական ծակոտկենություններ: Նույն հաշվարկային գործողությունները v_2, v_3 և v_4 ընթացիկ ծակոտկենությունների դեպքում կատարվում են նաև նմուշի դեֆորմացման մյուս աստիճանների համար:

Ստացված արդյունքների հիման վրա հնարավոր է կառուցել կլոր հատույթով փորձանմուշի նստեցման յուրաքանչյուր աստիճանից հետո ծակոտկենության բաշխման գրաֆիկները՝ դրա լայնական հատույթի տարբեր կետերում: Ինչպես երևում է աղյուսակից, յուրաքանչյուր դեֆորմացումից հետո ծակոտկենությունը նվազում է, մասնավորապես՝ փորձանմուշի կենտրոնում ընդունում է իր փոքրագույն արժեքը: Այդ արդյունքները համեմատվել են նաև ծակոտկեն նյութի պլաստիկության դեֆորմացիոն տեսությամբ ստացված տվյալների հետ [4]: Հաշվի առնելով, որ ծակոտկեն նյութի պլաստիկության դեֆորմացիոն տեսության բանաձևով հաշվակները կատարված են որոշակի մոտավորությամբ, նույն մոտավորությամբ կատարվում է ևս մեկ հաշվարկ՝ ծակոտկեն նյութի պլաստիկության հոսունության տեսության ծակոտկենության որոշման բանաձևով: Ընդ որում, մոտավորությունն այն է, որ սկզբնական փոքր ($v_0 = 0,1$) ծակոտկենության և $2...4$ դեֆորմացման (նստեցման) աստիճաններում ծակոտկենության v_i ընթացիկ արժեքների դեպքում (9)-ի հայտարարը վերցված է 1-ին հավասար $((1 - v)^{3n-1} \approx 1)$: Ծակոտկենության տացված արժեքները ներկայացված են աղ. 3-ում:

*Ծակոտկենության արժեքները փորձանմուշի լայնական հատույթի տարբեր կետերում
դեֆորմացման առաջին աստիճանի դեպքում՝ հաշվարկված պլաստիկության
դեֆորմացիոն և հոսունության տեսություններով*

$r, մմ$	0	1,311	2,623	3,934	5,245	6,556	7,868	9,179	10,49
V ՄՆՊԴՏ	0,0694	0,0687	0,0691	0,0695	0,0701	0,0707	0,0713	0,0719	0,0726
V ՄՆՊՀՏ մոտավոր	0,0652	0,0662	0,0672	0,0682	0,0692	0,0702	0,0711	0,0721	0,073
V ՄՆՊՀՏ հիմնական	0,062	0,063	0,064	0,066	0,067	0,068	0,069	0,070	0,071

Վերը նկարագրված հաշվարկային գործողություններից հետո կառուցվել է նյութի ծակոտկենության բաշխման գրաֆիկը պլաստիկության դեֆորմացիոն և հոսունության տեսությունների հիման վրա: Նկարում նյութի ծակոտկենության բաշխման գրաֆիկներն են դեֆորմացման առաջին աստիճանի դեպքում. 1-ը՝ հաշվարկված ծակոտկեն նյութերի պլաստիկության հոսունության տեսությամբ, 2-ը՝ կրկին պլաստիկության հոսունության տեսությամբ, սակայն [4]-ում նկարագրված մոտավոր մեթոդով, իսկ 3-ը՝ պլաստիկության դեֆորմացիոն տեսությամբ:



*Նկ. Փորձանմուշի ընթացիկ v ծակոտկենության գրաֆիկները r շառավղից կախված՝
ճշգրիտ ու մոտավոր [4] պլաստիկության հոսունության (1, 2) և դեֆորմացիոն (3)
տեսություններով հաշվարկված*

1, 2 և 3 գրաֆիկների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց միջև առկա որոշ շեղումները բացատրվում են մոտավոր բանաձևերի կիրառմամբ:

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նմուշի դեֆորմացման 4 աստիճաններից հետո սկզբնական $v_0 = 0,1$ ծակոտկենությունը նվազել է մինչև 0,013, որը գտնվում է նմուշի լայնական հատույթի կենտրոնում:

Եզրակացություն: Եռակալված փորձանմուշի ծակոտկենության փոփոխման արժեքների որոշման համար օգտագործվել է ծակոտկեն նյութերի պլաստիկության հոսունության տեսության ծակոտկենության որոշման բանաձևը: EXCEL ծրագրային միջավայրում թվային օրինակի լուծման հիման վրա որոշվել են նմուշի դեֆորմացիայի տարբեր աստիճաններում ծակոտկենության արժեքները, ինչպես նաև կառուցվել է լայնական հատույթում նյութի ծակոտկենության բաշխման գրաֆիկը: Կատարված հաշվարկները ցույց են տվել, որ.

1. Ծակոտկենության արժեքները անհավասարաչափ են բաշխված նմուշի շառավղով. կենտրոնում ծակոտկենության արժեքը ստացվում է նվազագույնը:

2. Թվային ինտեգրման գործընթացը շարունակելով՝ կարելի է նմուշի կենտրոնում ստանալ տարբեր շառավղներով նյութի անծակոտկեն գոտիներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Малинин Н.Н.** Прикладная теория пластичности и ползучести. - М.: Машиностроение, 1975. – 399 с.
2. **Сторожев М.В., Попов Е.А.** Теория обработки металлов давлением. - М.: Машиностроение, 1977. – 423 с.
3. **Петросян Г.Л.** Пластическое деформирование порошковых материалов. - М.: Металлургия, 1988. – 153 с.
4. **Петросян Г.Л., Азарян Л.А., Арустамян А.М., Карапетян А.К.** Исследование процесса осадки спеченного цилиндра при различных контактных условиях // Вестник ГИУА. Серия "Механика, машиноведение, машиностроение". - 2014. - Вып. 17, N2. – С. 32-41.
5. **Малинин Н.Н.** Технологические задачи пластичности и ползучести. - М.: Высшая школа, 1979. – 119 с.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է տպագրության 25.11.2016:

Ա.Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ИССЛЕДОВАНИЕ ПРОЦЕССА ОСАДКИ КРУГЛОГО ОБРАЗЦА ПО ТЕОРИИ ПЛАСТИЧНОСТИ ТЕЧЕНИЯ ПОРИСТОГО МАТЕРИАЛА

Проведено исследование процесса осадки круглого сечения по теории пластичности течения пористого материала. Используются формула для определения пористости по теории пластичности течения пористых материалов и безразмерная формула для определения контактного нормального напряжения в случае трения скольжения на торцах образца. На основании численных расчетов, проведенных в программной среде MS Excel, определены значения приращения и величины пористости в различных точках поперечного сечения, которые были сопоставлены с данными, полученными на основе деформационной теории пластичности пористых материалов.

Ключевые слова: круглый образец, спеченный материал, осадка, контактное нормальное напряжение, скольжение, пористость.

A.GH. KARAPETYAN

**INVESTIGATING THE UPSETTING PROCESS OF A CYLINDRICAL SAMPLE
BY THE THEORY OF THE FLOW OF A POROUS MATERIAL PLASTICITY**

The dimensionless formula for determining the contact normal stress in the case of a friction slipping at the ends of the specimen and the formula for determining the growth (increment) and the value of the porosity by the theory of the flow of plasticity of porous materials are used. On the basis of numerical calculations carried out in the software environment MC Excel, the value of porosity at different points of the cross section are determined, which were compared with the data obtained on the basis of the deformation theory of plasticity of porous materials.

Keywords: cylindrical sample, sintered material, upsetting, contact normal stress, slipping, porosity.

Ս.Գ. ԱՂԲԱԼՅԱՆ, Ա.Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՊՂՆՁԻ ՀԻՄՔՈՎ ԴԻՍՊԵՐՍ ԿԱՐԾՐԱՑՈՂ ԵՎ ԱՄՐԱՑՎՈՂ
ՓՈՇԵԿՈՄՊՈԶԻՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՔ ԱՐՏԱՄՂՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ**

Ցույց է տրված, որ կոնտակտային եռակցման էլեկտրոդների համար օգտագործվող փոշեկոմպոզիտային նյութերը պետք է լինեն պղնձի հիմքով, ընդ որում, մայրակի ամրացումը պետք է կատարվի դիսպերս մասնիկներով կարծրացման և դիսպերս հատիկներով ամրացման մեխանիզմներով՝ ջերմամշակմամբ, իսկ բարձր էլեկտրահաղորդականությունը, ջերմահաղորդականությունը և ջերմակայունությունն ապահովվեն շերտավոր կառուցվածքով կոմպոզիտային նյութերի օգտագործմամբ, որտեղ մակերևութային շերտի բարձր էլեկտրահաղորդականությունը և ջերմահաղորդականությունը պետք է ապահովի ցածր լեգիրված պղնձյա անծակոտկեն մարյակը, իսկ միջուկի բարձր մեխանիկական հատկությունները և ջերմակայունությունը՝ պղնձի հիմքով բարձր լեգիրված կոմպոզիտային անծակոտկեն կառուցվածքով նյութը, որոնց անծակոտկենության ապահովումը նպատակահարմար է իրականացնել տաք արտամղմամբ: Բացահայտվել է, որ տաք արտամղման դեպքում սահմանափակող գործոն է դառնում λ արտամղման գործակիցը, որի մեծանալով կտրուկ աճում են նյութի մեխանիկական հատկությունները: Ցույց է տրված, որ առավելագույն արժեքների դրանք հասնում են $\lambda = 4...5$ դեպքում: Հետազոտվել են 13%Ni+3%Al+1,0%Cr+0,8%Zr+Cu_{տե} բաղադրությամբ փոշեկոմպոզիտային նյութի կառուցվածքագոյացման մեխանիզմը և կինետիկան, տաք արտամղման դեպքում ընտրվել են օպտիմալ ռեժիմներ:

Առանցքային բառեր. փոշեկոմպոզիտային նյութ, մամլում, եռակալում, տաք արտամղում, դիսպերս կարծրացում, դիսպերս ամրացում, ջերմակայունություն, էլեկտրահաղորդականություն:

Ներածություն. Ժամանակակից տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ մեծ տեղ է հատկացվում հատկապես մետաղական հիմքով բարձրամուր և ֆունկցիոնալ նշանակությամբ կոմպոզիտային նյութերին (ԿՆ): Այս տեսակետից նշանակալից են պղնձի հիմքով կոմպոզիտային նյութերը, ինչպիսիք են դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող պղնձյա փոշեհամաձուլվածքները, որոնց պահանջարկը շատ մեծ է արդի տեխնիկայում, հատկապես կոնտակտային եռակցման էլեկտրոդների արտադրությունում [1]: Նշված արտադրատեսակներին ներկայացվող պահանջներն են բարձր էլեկտրահաղորդականություն և ջերմակայունությունը, որոնց ապահովման համար օգտագործվող նախապատրաստվածքները պետք է լինեն անծակոտկեն, և ցանկալի է՝ ունենան շերտավոր կառուցվածք, որում արտաքին շերտը կապահովի բարձր էլեկտրա-

հաղորդականություն, իսկ ներքին շերտը՝ բարձր ջերմակայունություն: Այսպիսի կառուցվածք գործնականում հնարավոր է ապահովել միայն փոշեմետալուրգիական եղանակներով, հատկապես շերտավոր մամլվածքների տաք արտամղման կամ ճնշմամբ մշակման միջոցով: Սակայն մինչև այժմ լիովին ուսումնասիրված չեն դիսպերս մասնիկներով (ֆազերով) կարծրացող և միաժամանակ դիսպերս հատիկներով ամրացվող փոշեկոմպոզիտային նյութերի տաք արտամղման տեսական և տեխնոլոգիական առանձնահատկությունները: Եվ քանի որ փոշեմետալուրգիան խիստ հեռանկարային է Հայաստանի Հանրապետության համար, որտեղ առկա են մետաղական հումքի մեծ պաշարներ, հատկապես պղնձի, հետևապես՝ հետազոտվող խնդիրը նույնպես հեռանկարային է և տարբերվում է ավանդական եղանակներից:

Ելնելով վերը նշվածից՝ աշխատանքի նպատակն է հետազոտել դիսպերս մասնիկներով (ֆազերով) կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող բարձր էլեկտրահաղորդականությամբ ու ջերմակայունությամբ օժտված պղնձի հիմքով փոշեկոմպոզիտային նյութերի տաք արտամղման գործընթացը և ուսումնասիրել կառուցվածքագոյացման մեխանիզմը:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Կատարվել է կոմպոզիտային նյութերի ստացմանը և կառուցվածքի ու հատկությունների ձևավորմանը նվիրված հայրենական և արտասահմանյան գրականության վերլուծություն [1-6], այդ թվում՝ դիսպերս մասնիկներով (ինտերմետաղական ֆազերով) կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր նյութերի համար: Վերլուծության են ենթարկվել կոմպոզիտային նյութերի ստացման տեխնոլոգիաները [1, 7, 8], որի արդյունքում պարզվել է, որ բարձր կարծրությամբ, ամրությամբ, էլեկտրահաղորդականությամբ, ջերմահաղորդականությամբ և ջերմակայունությամբ օժտված համաձուլվածքները, որոնք կարող են կիրառվել կոնտակտային եռակցման էլեկտրոդներ պատրաստելու համար, պետք է լինեն պղնձի հիմքով և ցանկալի է, որ բաղկացած լինեն մակերևութային շերտից ու միջուկից, որոնց մայրակի կարծրացումը և ամրացումը պետք է կատարվի ջերմամշակմամբ՝ դիսպերս մասնիկներով (ինտերմետաղական ֆազերով) կարծրացման և դիսպերս հատիկներով ամրացման մեխանիզմներով: Մակերևութային շերտի բարձր էլեկտրահաղորդականությունը և ջերմահաղորդականությունը պետք է ապահովի ցածր լեգիրված պղնձյա անձակոտկեն մարյակը, իսկ միջուկի բարձր ամրությունը, կարծրությունը և ջերմակայունությունը՝ պղնձի հիմքով բարձր լեգիրված կոմպոզիտային անձակոտկեն կառուցվածքով նյութը, որոնց կոմպակտավորումը նպատակահարմար է իրականացնել տաք արտամղմամբ: Ամրային բարձր արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ է ապահովել նաև ամուր կապ «արտաքին շերտ - միջուկ» անցումային շերտում՝ կոմպոզիտային նյութի ստացման գործընթացում: Նշված

խնդիրները կարող են լուծում գտնել միայն փոշեմետալուրգիական մեթոդներով, չնայած որ այստեղ ևս կան որոշակի դժվարություններ, հատկապես շերտավոր անծակոտկեն կոմպոզիտային նյութի ստացման գործընթացում՝ ապահովելու համար շերտերի հավասարաչափ հոսք տաք արտամղման ժամանակ: Աշխատանք [6]-ից հայտնի է, որ շերտավոր անծակոտկեն կոմպոզիտային նյութ ստանալու լավագույն մեթոդը տաք արտամղումն է, երբ եռակալումը և կառուցվածքի ձևավորումը համատեղվում են, և ապահովվում է անցումային շերտի բարձր ամրություն: Սակայն պղնձի հիմքով փոշեկոմպոզիտային նյութերի դեպքում այս ուղղությամբ հետազոտությունները քիչ են. չկա տաք արտամղման գործընթացի տեսական հիմնավորում, չեն ուսումնասիրվել հիմնական օրինաչափությունների մեխանիզմն ու խտացման կինետիկան, ինչպես նաև չի հետազոտվել շերտավոր կոմպոզիտային նյութում կառուցվածքազոյացման գործընթացը՝ կախված տաք արտամղման ռեժիմներից և դիսպերս մասնիկներով կարծրացնող ու դիսպերս հատիկներով ամրացնող ֆազերի պարամետրերից:

Հետազոտության արդյունքները. Ուսումնասիրվել են կոնտակտային եռակցման էլեկտրոդների աշխատանքային պայմանները և դրանց բնութագրերը [1]: Ցույց է տրված, որ էլեկտրոդներին ներկայացվող հիմնական պահանջներն են՝ բարձր էլեկտրահաղորդականություն, լայն ջերմաստիճանային տիրույթում բարձր մեխանիկական հատկություններ, բավարար մաշակայունություն, բարձր ջերմահաղորդականություն, կոռոզիակայունություն, ջերմակայունություն, հրակայունություն և այլն: Կոնտակտային եռակցման էլեկտրոդներից պահանջվող ֆիզիկամեխանիկական հատկությունների և կառուցվածքի ուսումնասիրման արդյունքում ընտրվել և հիմնավորվել է նոր դասի փոշեհամաձուլվածք՝ պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով (ինտերմետաղական ֆազերով) կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր կոմպոզիտային նյութ, որը կարելի է ստանալ նախօրոք պատրաստված բովախառնուրդներից միջուկի և արտաքին շերտի (սնամեջ գլան) մամլման, դրանք մեկը մյուսի մեջ հավաքման, վերամամլման, տաքացման (եռակալման), տաք արտամղման և համապատասխան ջերմային մշակման միջոցով:

Որպես ելանյութեր օգտագործվել են ПМС-1 մակնիշի էլեկտրոլիտիկ պղնձի (ГОСТ 4960-75), ПХ1С մակնիշի քրոմի (ТУ 14-22-50-91), ПЛ1 մակնիշի ցիրկոնիումի (ТУ 48-42-51-73), ПНЭ-1 մակնիշի նիկելի (ГОСТ 9722-79) և АПС-1А մակնիշի ալյումինի (ГОСТ 10096-76) փոշիներ: Արտաքին շերտի բովախառնուրդից երկկոդմանի մամլմամբ պատրաստվել են սնամեջ գլանական ($D_{\text{в}}=29,5$ մմ, $D_{\text{н}}=21,5$ մմ, $H=50$ մմ, $\theta = 10, 15, 20, 25, 30\%$), իսկ միջուկի բովախառնուրդից՝ գլանական նմուշներ ($D_{\text{в}}=21$ մմ, $H=50$ մմ, $\theta = 10, 15, 20, 25, 30\%$), այնուհետև հավասար ծակոտկենությամբ մամլվածքներն իրար մեջ հավաքելուց, վերամամլումից

և ջրածնի միջավայրում $900...950^{\circ}C$ ջերմաստիճանում $1...1,5$ ժ եռակալելուց հետո ենթարկվել են տաք արտամղման մայրակի $2\alpha=110^{\circ}$ և $\lambda=4$ արտամղման գործակցով:

Տաք արտամղման գործընթացի հիմնավորման համար տեսական հիմք է հանդիսացել Գրինի կողմից առաջարկված ծակոտկեն նյութերի պլաստիկության տեսությունը [9], որն իր հետագա զարգացումն է ստացել պրոֆեսոր Գ. Պետրոսյանի կողմից [10, 11]: Համաձայն այս տեսության՝

$$\sigma_{\text{էկվ}} = \frac{1}{\beta^{n+0.5}} \cdot \left(\frac{3}{2} \cdot S_{ij} \cdot S_{ij} + 9\alpha^m \sigma_0^2 \right)^{1/2},$$

$$d\bar{\varepsilon}_{\text{էկվ}} = \beta^{2n-0.5} \cdot \left(\frac{2}{3} \cdot de_{ij} \cdot de_{ij} + \frac{d\varepsilon_0^2}{\alpha^m} \right)^{1/2},$$

$$d\varepsilon_{ij} = \frac{3d\bar{\varepsilon}_{\text{էկվ}}}{\beta^{3n} 2\sigma_{\text{էկվ}}} \cdot [\sigma_{ij} - (1 - 2\alpha^m)\delta_{ij}\sigma_0],$$

$$d\theta = \frac{9 \cdot \alpha^m (1 - \theta) \cdot \sigma_0 \cdot d\bar{\varepsilon}_{\text{էկվ}}}{\beta^{3n} \cdot \sigma_{\text{էկվ}}},$$

որտեղ $\sigma_{\text{էկվ}}$ -ը համարժեք լարումն է, $d\bar{\varepsilon}_{\text{էկվ}}$ -ը՝ պլաստիկ դեֆորմացմանը համարժեք աճը, de_{ij} , $d\varepsilon_{ij}$, S_{ij} , σ_{ij} -ն՝ պլաստիկ դեֆորմացման և լարման դիստորսիաների և տենզորների կոմպոնենտների աճը, $\sigma_0=1/3\delta_{ij}\sigma_{ij}$ -ն՝ միջին լարումը, $d\varepsilon_0=1/3\delta_{ij}d\varepsilon_{ij}$ -ն՝ միջին դեֆորմացման աճը, δ_{ij} -ն՝ Կրոնեկերի սիմվոլը, n -ը և m -ը՝ θ հարաբերական ծակոտկենության պարամետրերը, α -ն և β -ն՝ ծակոտկենության ֆունկցիաները, որոնք որոշվել են հետևյալ բանաձևերով.

$$\alpha = \frac{1}{4} \left[\frac{3(1 - \theta^{1/3})}{(3 - 2\theta^{1/4}) \ln \theta} \right]^2, \quad \beta = \left[\frac{3(1 - \theta^{1/3})}{3 - 2\theta^{1/4}} \right]^2:$$

α -ի և β -ի որոշակի արժեքների դեպքում կարելի է ծակոտկեն նյութերի բանաձևերից անցում կատարել հոծ նյութերի պլաստիկության տեսությանը և տրված նյութի համար փորձնականորեն որոշել n և m պարամետրերը: n և m պարամետրերի որոշումը և դեֆորմացման դիագրամի կառուցումը կատարվել են վերը նշված բովախառնուրդներից պատրաստված ծակոտկեն գլանաձև նմուշի միառանցքային սեղմման փորձարկման արդյունքների հիման վրա: Այս դեպքում գլխավոր լարումը $\sigma_1=\sigma_2=0$, $\sigma_3=-\sigma$, ընդ որում՝ $\sigma=P/F$ առանցքային լարումն է (մամլման ճնշումը), իսկ P -ն և F -ը՝ նմուշի սեղմման ուժը և լայնակի կտրվածքի

մակերեսը: Հետևաբար, միառանցքանի լարվածային վիճակի դեպքում վերը նշված կախվածությունները կունենան հետևյալ տեսքը՝

$$\sigma_{\text{էլլ}} = K_1 \sigma; \quad d\bar{\varepsilon}_{\text{էլլ}} = K_2 d\varepsilon ,$$

$$d\theta = \frac{3 \cdot \alpha^m (1 - \theta)}{1 + \alpha^m} \alpha \cdot \varepsilon ,$$

$$K_1 = \frac{\sqrt{1 + \alpha^m}}{\beta^{n+0.5}}; \quad K_2 = \frac{\beta^{2n-0.5}}{\sqrt{1 + \alpha^m}} ,$$

որտեղ $d\varepsilon$ -ն առանցքի ուղղությամբ պլաստիկ դեֆորմացման աճն է, $\varepsilon = \ln h_0/h$ -ը՝ առանցքի ուղղությամբ պլաստիկ դեֆորմացումը, h_0 -ն և h -ը՝ նախապատրաստվածքի սկզբնական և ընթացիկ բարձրությունը, իսկ k_1 և k_2 -ը՝ լարման և պլաստիկ դեֆորմացման աճին համարժեք գործակիցները:

Ստացված փորձնական արդյունքների տեսական հիմնավորման նպատակով կատարվել է անդրադարձ ծակոտկեն մարմնի պլաստիկության տեսության կախվածություններին: Բացառելով $d\bar{\Sigma}_{\text{էլլ}}$ -ը, կստանանք.

$$d\theta = \frac{6 \cdot \alpha^m (1 - \theta) \cdot \sigma_0}{\sigma_{ij} - (1 - 2\alpha^m) \cdot \delta_{ij} \cdot \sigma_0} \cdot d\varepsilon_{ij} :$$

Մյուս կողմից՝ կոշտ գլանաձև մամլամայրերում մամլման դեպքում (եռառանցքանի սեղմում, ε_θ շրջանային և ε_r շառավղային դեֆորմացումները բացակայում են, և նախապատրաստվածքի դեֆորմացված վիճակը բնութագրվում է առանցքային դեֆորմացման իրական չափով.

$$\varepsilon = \ln \frac{h_0}{h} ,$$

որտեղ h -ը և h_0 -ն նախապատրաստվածքի ընթացիկ և սկզբնական բարձրություններն են: Ընդունենք, որ շփման ուժերը կոնտակտային մակերևույթներում բացակայում են, այսինքն՝ $\sigma_1 = \sigma_2 = \sigma_r = \sigma_\theta$, $\sigma_3 = -\sigma$, և հաշվի առնելով, որ $d\varepsilon_\theta = d\varepsilon_r = 0$, կստանանք

$$\sigma_\theta = \sigma_r = -\frac{1 - 2\alpha^m}{1 + 4\alpha^m} \cdot \sigma ,$$

որտեղ σ -ն մամլման ճնշումն է:

Հետևաբար՝ $\sigma_{\text{էլլ}}$ համարժեք լարումը և պլաստիկ դեֆորմացման համարժեք աճը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\sigma_{\text{էկվ}} = \frac{3\sigma}{\beta^{n+0.5}} \sqrt{\frac{\alpha^m}{1+4\cdot\alpha^m}},$$

$$d\varepsilon_{\text{էկվ}} = \frac{\beta^{2n-0.5}}{3} \cdot d\varepsilon \sqrt{\frac{1+4\cdot\alpha^m}{\alpha^m}} :$$

ձժ ծակոտկենության աճը ևս արտահայտենք առանցքային դեֆորմացման աճի միջոցով, այդ դեպքում կստանանք.

$$d\theta = \frac{6\cdot\alpha^m(1-\theta)\cdot(\sigma_z + \sigma_r + \sigma_\theta)}{2\sigma_z - \sigma_r - \sigma_\theta + 2\alpha^m(\sigma_z + \sigma_r + \sigma_\theta)} \cdot d\varepsilon_z :$$


Ինտեգրենք ստացված հավասարումը՝ հաշվի առնելով σ_θ -ի բանաձևը, կգտնենք

$$\theta = 1 - (1 - \theta_0) \exp \varepsilon ,$$

որտեղ θ_0 -ն սկզբնական հարաբերական ծակոտկենությունն է:

Վերը նշված հավասարումները բացահայտում են σ ճնշման և θ ծակոտկենության կախվածությունը դեֆորմացման աստիճանից մեկ և եռառանցքանի սեղմման դեպքում կոշտ գլանաձև մայրակում: Իմանալով $d\varepsilon$ -ն, n և m պարամետրերը, ինչպես նաև θ_0 սկզբնական ծակոտկենությունը և օգտվելով $\sigma_{\text{էկվ}}$ -ի և $d\theta$ -ի կամ $d\varepsilon_{\text{էկվ}}$ -ի և $d\theta$ -ի բանաձևերից, հաշվարկվել է θ -ն և $\int d\varepsilon_{\text{էկվ}}$ -ը: Այնուհետև դեֆորմացման դիագրամից գտնվել է $\sigma_{\text{էկվ}}$ -ի համապատասխան արժեքը, իսկ $\sigma_{\text{էկվ}}$ -ի բանաձևերից՝ մամլման ճնշումը: Արդյունքում՝ կառուցվել են $(\theta - \varepsilon)$ և $(\sigma - \varepsilon)$ կախվածության գրաֆիկները՝ 13%Ni+3%Al+1,0%Cr+0,8%Zr+Cu մև բաղադրությամբ բովախառնուրդից պատրաստված $\theta_0=0,2$ հարաբերական ծակոտկենությամբ ծակոտկեն փորձանմուշների համար (նկ.):

Ինչպես տեսնում ենք, եռառանցքանի սեղմման դեպքում 2-րդ կորը տեղաբաշխված է զգալիորեն բարձր, քան միառանցքանի սեղմման դեպքում (1 կոր): Այդպես էլ պետք էր ակնկալել, քանի որ եռառանցքանի սեղմմամբ նյութի ծակոտկենությունը (4 կոր) նվազում է ավելի արագ, քան միառանցքանի դեպքում (3 կոր): Ծակոտկենության արժեքները մեկ և եռառանցքանի սեղմման դեպքերում, որոնք հաշվարկված են $d\theta$ -ի և θ -ի բանաձևերով, բերված են աղյուսակում, որից տեսնում ենք, որ եռառանցքանի սեղմման դեպքում ծակոտկենությունը նվազում է այնքան ինտենսիվ, որքան փոքր է նմուշի սկզբնական հարաբերական ծակոտկենությունը: Այսպես, օրինակ, նյութի ծակոտկենությունը եռառանցքանի սեղմման դեպքում նվազում է 2,15 անգամ ավելի շատ, քան միառանցքանի սեղմման դեպքում: Սկզբնական ծակոտկենության փոքրացումը մեծացնում է այս հարաբերությունը, և արդեն $\theta_0=0,1$ դեպքում այն հասնում է 4,60-ի:



Նկ. 13%Ni+3%Al+1,0%Cr+0,8%Zr+Cu_{մն} բաղադրությամբ բովախառնուրդից պատրաստված ծակոտկեն փորձանմուշների սեղմման դիագրամը տարբեր բեռնվածությունների դեպքում. 1, 2 - ($\sigma - \epsilon$) կոորդինատային համակարգում, 3, 4 - ($\theta - \epsilon$) կոորդինատային համակարգում, 1, 3- միառանցքանի սեղմում, 2, 4- եռառանցքանի սեղմում

Աղյուսակ

Պեֆորմացման սխեմայից կախված ($m=0,75$, $n=0,2$) նյութի ծակոտկենության փոփոխումը

θ_0	α	$d\theta$		$d\theta_2/d\theta_1$
		միառանցքանի սեղմում, $d\theta_1$	եռառանցքանի սեղմում, $d\theta_2$	
0,1	0,0342	-0,0391	-0,18	4,60
0,2	0,0535	-0,0464	-0,16	3,45
0,3	0,0750	-0,0511	-0,14	2,74
0,4	0,0990	-0,0533	-0,12	2,25
0,5	0,11400	-0,0465	-0,10	2,15

Կոմպակտավորման հաշվարկային արժեքները ստուգվել են փորձնականորեն: Նկարում կետերով ցույց են տրված կոնտակտային եռակցման էլեկտրոդների միջուկի համար նախատեսված փորձանմուշների ծակոտկենության փորձնական արդյունքները եռառանցքանի սեղմման դեպքում (2, 4 կորեր), որոնք պատրաստվել են տաք արտամղմամբ 3%Ni+3%Al+1,0%Cr+0,8%Zr+Cu_{մն} բաղադրությամբ բովախառնուրդից: Քանի որ ստատիկ մամլմամբ անծակոտկեն կառուցվածքի ստացումը շատ դժվար է, մեզ չի հաջողվել ստանալ փորձնական կետեր 2 և 4 կորերի ամբողջ երկայնքով, այսինքն՝ մինչև $\epsilon=0,3$: Ինչպես տեսնում ենք, ϵ -ի արժեքի մի քանի տիրույթներում փորձնական տվյալները մոտ են տեսականին, ինչը հնարավորություն է տալիս կիրառելու Գրինի և Գ. Պետրոսյանի տեսությունները կոմպոզիտային իզոտրոպ նյութերի դեպքում: Հետևաբար, մետա-

ղափռչուց արտադրատեսակների ստացման համար անհրաժեշտ է օգտագործել այնպիսի տեխնոլոգիական գործընթացներ, որոնց դեպքում նյութը կենթարկվի ավելի մեծ աստիճանի պլաստիկ դեֆորմացումների, այդ թվում՝ սահքի դեֆորմացման: Այդպիսի գործընթաց է տաք արտամղումը:

Հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նմուշների մնացորդային ծակոտկենությունը $\theta_0=15\%$ նախնական ծակոտկենության դեպքում ավելի ցածր է, քան $\theta_0=30\%$ նախնական ծակոտկենության դեպքում: Նման օրինաչափություն տեղի ունի ինչպես խտացման ստատիկ, այնպես էլ իմպուլսային եղանակների դեպքում: Դա նշանակում է, որ անծակոտկեն կառուցվածքների ստացման համար ավելի նպատակահարմար է ելային նախապատրաստվածքները պատրաստել նվազագույն ծակոտկենությամբ:

Տաք արտամղման ժամանակ դիսպերս մասնիկներով կարծրացող (ինտերմետաղական ֆազերով) և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր ծակոտկեն փոշեկոմպոզիտային մետաղական նյութերի դեֆորմացված լարվածային վիճակի և կառուցվածքագոյացման մեխանիզմի վերլուծման արդյունքում բացահայտվել է, որ արտամղման ժամանակ արտամղվող շերտավոր փոշեկոմպոզիտային մետաղական նյութի օղակաձև շերտերը ենթարկվում են ոչ միայն առանցքային և լայնական, այլ նաև սահքի դեֆորմացման: Վերջինս ներքին շերտերից դեպի մակերևութային շերտեր աճում է: Աճում են նաև երկարացմանը նպաստող հիմնական լարումները և սահքի դեֆորմացումների գումարը: Ցույց է տրված, որ մամլման մասի ելքի մոտ երկարացմանը նպաստող գլխավոր լարումների ուղղությունները տարբեր են. դրանք կազմում են մամլման առանցքի հետ որոշակի անկյուն, որը նույնպես աճում է դեպի մակերևութ: Արդյունքում՝ ցույց է տրված, որ գլխավոր շառավղային և շրջանագծային դեֆորմացումները արգելակող դեֆորմացումներ են: Միաժամանակ, ներքին շերտերի գոտում լրացուցիչ սեղմող լարումները, վերադրվելով հիմնական սեղմող լարումներին, չեն փոխում մետաղի լարվածային վիճակը. այն մնում է նույնը, այսինքն՝ բոլոր կողմերից անհավասարաչափ սեղմված: Արտաքին շերտերի գոտում ձգման լրացուցիչ լարումները, վերադրվելով հիմնական սեղմող երկայնական լարումներին, փոքրացնում են դրանք, իսկ որոշ պայմանների դեպքում, գերազանցելով դրանց, փոխում են մետաղի լարվածային վիճակի տեսքը և բոլոր կողմերից անհավասարաչափ սեղմումը ձևափոխում երկկողմանի (ընդլայնական) սեղմման և երկայնական ձգման:

Եռակալված շերտավոր փոշեկոմպոզիտային նյութերի (արտաքին շերտ - $1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{\text{մե}}$, ներքին շերտ - $13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{\text{մե}}$) տաք արտամղման գործընթացների հետազոտումը ցույց է տվել, որ նույն մետաղական հիմքով, բայց տարբեր քիմիական բաղադրությամբ շերտերի միջև ապահովվում է ֆիզիկական կոնտակտի առաջացում՝ ամուր մետաղական կապի գոյացումով:

Վճռորոշը ոչ միայն տնտեսական գործոնն է, այլև սկզբունքորեն նոր նյութերի ստեղծումը, որոնց ստացումն անհնար է մետալուրգիական ավանդական եղանակներով:

Տաք արտամղումից հետո մշակված շերտավոր փոշեկոմպոզիտային նյութը ենթարկվել է ջերմամշակման՝ թրծման, միման, ճնշմամբ մշակման և ծեղացման: Թրծման ջերմաստիճանն ընտրվել է մեխանիկական հատկությունների ջերմաստիճանային կախվածության գրաֆիկից, համաձայն որի այն գտնվում է համեմատաբար նեղ տիրույթում՝ $T_{\text{լ}}=650\dots700^{\circ}\text{C}$, իսկ տևողությունը վերցվել է 1...2 ժ կախված վառարանի բեռնավորման աստիճանից:

Համալիր գիտափորձական հետազոտությունների արդյունքում որոշվել են ամրացնող ջերմային մշակման (միում, ծրացում) լավարկված պարամետրերը՝ $T_{\text{մ}}=1000\pm25^{\circ}\text{C}$, $\tau_{\text{մ}}=1\dots1,5$ ժ, $T_{\text{ծ}}=450\pm25^{\circ}\text{C}$, $\tau_{\text{ծ}}=6$ ժ, որոնց դեպքում ապահովվում են ոչ միայն բարձր մեխանիկական հատկություններ՝ α -պինդ լուծույթի հիմքով արտաքին շերտի $\sigma_{\text{ծ}}=550\dots600$ ՄՊա, $\text{HB}=1550\dots1850$ ՄՊա, $\delta=10\dots20\%$, իսկ α -պինդ լուծույթի հիմքով ներքին շերտի $\sigma_{\text{ծ}}=900\dots950$ ՄՊա, $\delta=10\dots15\%$, $\text{HB}=2500\dots2600$ ՄՊա, այլև արտաքին շերտի բարձր ջերմահաղորդականություն ($\chi=70$ Վտ/Գ.ս), էլեկտրահաղորդականություն՝ պղնձի հաղորդականության $\approx 80\%$ -ը և ներքին շերտի ջերմակայունություն՝ մինչև 500°C :

Եզրակացություն. Տեսական վերլուծությամբ և փորձական եղանակով հիմնավորվել է տաք արտամղման գործընթացի առավելությունը դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող փոշեհամաձուլվածքների կոմպակտավորման ժամանակ: Սահմանվել են պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող փոշեկոմպոզիտային նյութերի տաք արտամղման հիմնական օրինաչափությունները՝ կախված ջերմաստիճանից, պահման տևողությունից, նախնական ծակոտկենությունից, մայրակի անկյունից և արտամղման գործակիցից: Բացահայտվել են $13\%\text{Ni} + 3\%\text{Al} + 1,0\%\text{Cr} + 0,8\%\text{Zr} + \text{Cu}_{\text{մ}}$ բաղադրությամբ փոշեկոմպոզիտային նյութերի տաք արտամղման դեպքում կառուցվածքագոյացման օրինաչափությունները: Գիտափորձերի արդյունքների մշակմամբ արտածվել են ամրության և կարծրության կախվածությունները տաք արտամղման պարամետրերից, որի արդյունքում կատարվել են տաք արտամղման լավարկված ռեժիմների ընտրում և հիմնավորում: Արտամղման ջերմաստիճանը՝ $T_{\text{մ}}=900\dots950^{\circ}\text{C}$, արտամղման ջերմաստիճանում պահման տևողությունը՝ $\tau_{\text{մ}}=1\dots1,5$ ժ, մայրակի կոնական անկյունը՝ $2\alpha_{\text{մ}}=110^{\circ}$ և արտամղման գործակիցը՝ $\lambda=4\dots5$:

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Նյութագիտություն և մետալուրգիա» բազային գիտահետազոտական լաբորատորիայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Николаев А.К., Розенберг В.М.** Сплавы для электродов контактной сварки.- М.: Металлургия, 1978.- 96 с.
2. Современные композиционные материалы / Под ред. **И.Л. Светлова**.- М.: Мир, 1970.- 672 с.
3. **Карпинос Д.М., Тучинский Л.И., Вишняков Л.Р.** Новые композиционные материалы.- Киев: Вища школа, 1977.- 312 с.
4. **Ковальченко М.С.** Теоретические основы горячей обработки пористых материалов давлением.- Киев: Наукова думка, 1980.- 240 с.
5. **Манукян Н.В.** Технология порошковой металлургии.- Ереван: Айастан, 1986.- 230 с.
6. **Агбальян С.Г.** Теоретические и технологические основы формирования структуры и свойств порошковых материалов при экструзии: Автореф. дис.... докт. техн. наук.- Ереван, 1992.- 33 с.
7. **Վափրյան Գ.Ա.** Պղնձի հիմքով բարձրամուր կոմպոզիցիոն նյութերի ստացման տեխնոլոգիայի մշակումը: Տ. գ. թ. ատենախոսության սեղմագիր.- Երևան, 2013.- 23 էջ:
8. **Агбальян С.Г., Василян Г.А., Саркисян А.Р., Бояджян С.Г.** Разработка технологии получения высокопрочных композиционных материалов для электродов контактной сварки // Вестник ГИУА: Металлургия, материаловедение, недропользование.- Ереван, 2015.- № 2.- С. 20-32.
9. **Грин Р.Дш.** Теория пластичности пористых тел // Механика: Периодический сборник переводов иностранных статей.- М., 1973.- № 4 (140).- С. 109-120.
10. **Петросян Г.Л.** О теории пластичности пористых тел // Изв. Вузов. Сер. Машиностроение.- 1977.- № 5.- С. 10-13.
11. **Петросян Г.Л.** Деформационная теория пластичности пористых материалов // Изв. Вузов. Сер. Машиностроение.- 1978.- № 11.- С. 5 - 8.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 22.06.2017:

С.Г. АГБАЛЯН, А.Р. САРКИСЯН

**ИССЛЕДОВАНИЕ ПРОЦЕССА ГОРЯЧЕГО ВЫДАВЛИВАНИЯ
ПОРОШКОВЫХ ДИСПЕРСНО-ТВЕРДЕЮЩИХ И УПРОЧНЯЕМЫХ
КОМПОЗИЦИОННЫХ МАТЕРИАЛОВ НА ОСНОВЕ МЕДИ**

Показано, что используемые порошковые композиционные материалы для электродов контактной сварки должны быть на основе меди, причем упрочнение матрицы должно производиться термообработкой с механизмом твердения дисперсными частицами и упрочнения дисперсными зернами, а высокие электропроводность, теплопроводность и термостойкость должны обеспечиваться использованием композиционных материалов со слоистой структурой. При этом высокие электропроводность и теплопроводность наружного слоя должна обеспечивать низколегированная медная матрица, а высокие механические свойства и теплостойкость сердцевины – высоколегированный композиционный материал с беспористой структурой на основе меди, причем беспористость целесообразно обеспечить горячим выдавливанием. Выявлено, что при горячем выдавливании ограничивающим фактором является коэффициент вытяжки λ , с увеличением которого резко возрастают механические свойства материалов. Показано, что максимальные их значения достигаются при $\lambda = 4...5$. Исследованы механизмы структурообразования и кинетика горячей экструзии порошкового композиционного материала с составами $13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{ост}$ и выбраны оптимальные режимы.

Ключевые слова: порошковый композиционный материал, прессование, спекание, горячее выдавливание, дисперсионное твердение, дисперсионное упрочнение, теплостойкость, электропроводность.

S.G. AGHBALYAN, A.R. SARKISYAN

**INVESTIGATING THE PROCESS OF HOT EXTRUSION OF POWDER
COPPER-BASED DISPERSELY-HARDENING AND STRENGTHENING
COMPOSITE MATERIALS**

It is shown, that powder composite materials used for contact welding electrodes should be based on copper hot extrusion. In that case, the matrix strengthening should be carried out by heat treatment by hardening with disperse particles and strengthening with disperse grains while high electric and heat conductivity, as well as heat resistance should be ensured by using composite with a layered structure. At that the high electric and thermal conductivity of the outer layer should be ensured by the low- alloyed copper matrix, while the high mechanical properties and heat resistance of the core- be the high – alloyed non-porous structure copper- based composite material, and in this case non-porosity should be ensured by hot extrusion. It is revealed that at hot extrusion, a limiting factor is the stretching coefficient λ , whose growth causes an increase in the mechanical properties of the materials. It is shown that their maximal values are achieved at $\lambda=4...5$. The mechanisms of structurization and the kinetics of hot extrusion of powder composite materials with compositions $13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{ост}$ are investigated, and optimal modes are selected.

Keywords: powder composite material, pressing, roasting, hot extrusion, dispersed hardening, disperse strengthening, thermal resistance, electrical conductivity.

Ն.Գ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ, Կ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա.Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
Վ.Վ. ՍԱՐՈՅԱՆ

**ՏԵՂԱԿԱՆ ԽՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԿՈՄՊՈԶԻՏՈՒՄԻՆ
ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՇՓԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ**

Առաջարկվել են տեղական հանքանյութերի օգտագործմամբ կոմպոզիտային ինքնա-
յուզվող պոլիմերային հիմքով նյութերի ստացման տեխնոլոգիան և մետաղապոլիմերային
շփահակում շփանյութափոխանցման թաղանթների երկարակեցության գնահատման
հաշվարկային բանաձևը: Ամբողջական գործոնային փորձարկումների մեթոդով իրակա-
նացվել է կոմպոզիտների բաղադրակազմերի լավարկումը, ինչը հնարավորություն է ընձե-
ռում առաջարկել նյութեր՝ մաշման նվազագույն ուժգնությամբ և շփման գործակցի արժեքով:

Առանցքային բառեր. պոլիմեր, լցանյութ, շփանյութափոխանցում, մաշվածք,
շփման գործակից, թաղանթի երկարակեցություն:

Ներածություն: Չոր շփման պայմաններում աշխատանքի մեծ ռեսուրս և
նվազագույն մաշում ապահովող շփահանգույցների ստեղծումը, ինչպես նաև շփա-
նյութափոխանցման (ՇՆՓ) թաղանթների զարգացման դինամիկայի հետազո-
տումը հնարավորություն են տալիս բարձրացնելու մեքենաների և մեխանիզմների
մետաղապոլիմերային շփահանգույցների երկարակեցությունն ու մաշակայունու-
թյունը [1-3]: Պոլիմերային հիմքով կոմպոզիտային նյութերը, բազմաթիվ դրական
հատկությունների շնորհիվ, լայն կիրառություն են գտել մեքենաշինության տար-
բեր ճյուղերում:

Աշխատանքի նպատակը պոլիմերային հիմքով հակաշփական կոմպոզիտա-
յին նյութերի ու մեքենամասերի, տեղական հանքանյութերի օգտագործմամբ շփա-
հանգույցների մակերևութային շերտերի շփագիտական հետազոտումների, ինչ-
պես նաև չոր շփման պայմաններում մետաղապոլիմերային շփահամակարգում
ՇՆՓ թաղանթների երկարակեցության հաշվարկի և քանակական գնահատման
ու վերլուծության իրականացումն է:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Բուն պոլիմերի համեմատ՝
լցանյութերի տեսակի, քանակի և ֆիզիկամեխանիկական հատկությունների փո-
փոխման միջոցով հնարավոր է ստանալ ֆիզիկամեխանիկական և շփագիտական
շատ ավելի բարձր հատկություններ: Որոշ հանքանյութեր հաջողությամբ կարող
են կիրառվել որպես կոմպոզիտային ինքնայուզվող պոլիմերային նյութերի լցա-
նյութեր: Դիտարկվում է դրանցից երկուսի՝ մոլիբդենի և պղնձի խտանյութերի՝

որպես լցանյութերի արդյունավետությունն ացետալների խմբին պատկանող ֆորմալդեհիդի և դիօքսոլանի համապոլիմերի (ՖՂՀ) դեպքում: Նշված խտանյութերն արտադրվում են Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատում, և դրանց ստացման համար կիրառվում է մոլիբդենիտի ֆլուտացում՝ պղնձի սուլֆիդի կորզմամբ ծծմբային նատրիումի միջոցով, իսկ որպես փրփրիչ ծառայում է տերպինեոլը: Աղ. 1-ում ներկայացված է օգտագործված խտանյութերի քիմիական բաղադրակազմը:

Աղյուսակ 1

Խտանյութերի քիմիական բաղադրակազմը


Խտանյութ	Բաղադրակազմ	SiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	FeO	CaO	MgO	MoS ₂	CuS
Մոլիբդենի խտանյութ		9,0	1,2	0,54	-	-	-	82,0	1,6
Պղնձի խտանյութ		7,3	2,3	24,0	13,0	1,1	0,46	0,02	46,0

Լցանյութերը մանրացվել են մինչև 12...40 մկմ հատիկայնությամբ շիթային աղացում և ակտիվացվել են մակերևութային ակտիվ նյութով՝ ստեարինաթթվով՝ հակաշփական հատկությունները բարձրացնելու նպատակով: Լցանյութերի պարունակությունը կոմպոզիտներում փոփոխվել է 1...20 կշ.%. Կոմպոզիտային ինքնայուղվող պոլիմերային հիմքով նյութերի ստացման տեխնոլոգիան ներկայացված է նկ. 1-ում:


Փորձերի ընթացքում որպես հակամարմին օգտագործվել են պողպատ 45-ից պատրաստված օղակներ, որոնց կարծրությունն է 48...52 HRC, իսկ աշխատանքային մակերևույթը հղկվել է մինչև $R_a = 0,8$ մկմ խորդուբորդության չափ: Կոմպոզիտային նյութերը փորձարկվել են ՇՄ-01 շփամեքենայի վրա՝ «մատ-օղակ» շփման սխեմայով, 0,7 ՄՊա բեռնվածքի և 0,8 մ/վ սահքի արագության պայմաններում: Փորձարկման ընթացքում գրանցվել են շփման գործակցի, մաշման ուժգնության և մակերևութային ջերմաստիճանի արժեքները:

Հետազոտության արդյունքները: Պոլիմերային շփանյութերի հակաշփական հատկությունների վրա հանքանյութերի ազդեցության փորձարարական արդյունքները (նկ. 2) վկայում են, որ մոլիբդենի խտանյութի մեջ MoS₂-ի բարձր պարունակությունը նպաստել է պոլիմերային կոմպոզիտի շփման գործակցի արժեքի զգալի նվազմանը: Պղնձի խտանյութի համար դիտարկվում է մոտավորապես նույն պատկերը:

Կոմպոզիտների մաշակայունության վրա հանքանյութերի ազդեցության փորձարարական արդյունքները ցույց են տալիս, որ մոլիբդենի խտանյութը զգալիորեն բարելավում է պոլիմերի մաշակայունությունը՝ փոքրացնելով մաշվածքի չափը 8,5...9,2 անգամ (նկ. 3), անկախ լցանյութի քանակությունից:




Նկ. 1. Կոմպոզիտային ինքնայուղվող պոլիմերային հիմքով նյութերի ստացման տեխնոլոգիան



Նկ. 2. Մոլիբդենի (ա) և պղնձի (բ) խտանյութերով լցված ՖՂՀ-ի շփման գործակիցի կախվածությունը ժամանակից

Պղնձի խտանյութի օգտագործման պարագայում բոլոր կոմպոզիտների մաշվածքի չափը նույնպես զգալիորեն (2,5...4,1 անգամ) փոքր է բուն պոլիմերի արժեքից, սակայն նվազագույն մաշվածքը ստացվել է լցանյութի պարունակության 10 կշռ.% դեպքում: Այսպիսով, մոլիբդենի և պղնձի խտանյութերի օգտագործումը որպես լցանյութ ֆորմալդեհիդի և դիօքսոլանի համապոլիմերի դեպքում հանգեցնում է կոմպոզիտի մաշակայունության զգալի բարելավմանը՝ միաժամանակ ապահովելով շփման փոքր գործակից:



Նկ. 3. Մոլիբդենի (ա) և պղնձի (բ) խտանյութերով լցված ՖՂՀ-ի մաշվածքի չափի կախվածությունը ժամանակից

Ֆազային և ֆիզիկաքիմիական փոխակերպումները, որոնք տեղի են ունենում մետաղապոլիմերային շփահպակում, զգալի ազդեցություն են ունենում կոմպոզիտների մակերևութային շերտերի ֆիզիկամեխանիկական և շփաքիմիական հատկությունների վրա, նպաստելով բարձր ամրությամբ և մաշակայունությամբ ՇՆՓ թաղանթների ձևավորմանը [4-7]: Շփագույգի աշխատանքի արդյունավետությունը որոշվում է նյութի ոչ միայն «սկզբնական», այլև «երկրորդային» կառուց-

վածքով, որը ձևավորվում է շփման փոխազդեցության՝ շփանյութափոխանցման ընթացքում:

Ֆիզիկաքիմիական գործընթացների հիման վրա առաջարկված շփանյութափոխանցման թաղանթների ձևավորման մեխանիզմը [8,9] հնարավորություն է տալիս մշակելու և առաջարկելու թաղանթի հաստության և երկարակեցության գնահատման հաշվարկային մեթոդիկան: Ամփոփելով փորձարարական արդյունքները՝ վերլուծական եղանակով ստացվել է թաղանթների երկարակեցության հաշվարկային բանաձևը, ինչը հնարավորություն է տալիս կանխագուշակելու մետաղապոլիմերային շփահանգույցներում ձևավորված թաղանթների երկարակեցությունը:

$$T = \lambda h_{max}^{2/5} / \exp(-0,4E_a/k\theta), \quad (1)$$

որտեղ $\lambda = 0,22 \cdot 10^{-2} (h/ga^2 k\theta)^{2/5}$, h -ը Պլանկի հաստատունն է, g -ն՝ երկրաչափական գործոնը, a -ն՝ ատոմի տրամագիծը, k -ն՝ Բոլցմանի հաստատունը, θ -ն՝ մակերևութային ջերմաստիճանը, $E_a = E_0 + \beta_0 b^2 P_a^{2/3} - \alpha_0 / 2(c^2 t^2 + \sigma_s^2)$ ՝ մետաղի ատոմների ակտիվացման էներգիան, E_0 -ն՝ մինչև շփումը ակտիվացման ազատ էներգիան,

$$\alpha_0 = \frac{k_\sigma^2 V_0}{6G}, \beta_0 = \frac{k_\sigma^2}{2K} V_0, \underline{k}_\sigma \text{ -ն՝ ատոմային կապերի գերլարումը հաշվի առնող գոր-}$$

ծակիցը, V_0 -ն՝ ատոմի ծավալը, K -ն՝ ծավալային սեղմման մոդուլը, G -ն՝ սահքի մոդուլը, b , c -ն՝ նյութի առաձգական հատկությունները և շփման մակերևութային խորդուբորդության երկրաչափական պարամետրերը բնութագրող գործակիցները, P_a -ն՝ տեսակարար բեռնվածքը, σ_s -ը՝ հոսունության սահմանը, $\tau = fP_a$ ՝ տեսակարար շփման ուժը, f -ը՝ շփման գործակիցը, ρ -ն՝ պողպատի խտությունը, t -ն՝ գործընթացի տևողությունը, h_{max} -ը՝ շփանյութափոխանցման թաղանթի առավելագույն հաստությունը: Աղ. 2-ում բերված են (1) բանաձևով հաշվարկված մետաղական հակամարմնի վրա ձևավորված պոլիմերային թաղանթների երկարակեցության արժեքները:

Աղյուսակ 2

Շփանյութափոխանցման թաղանթների երկարակեցության հաշվարկային արժեքները
($t = 60$ ր, $P_a = 1,91$ ՄՊա, $v = 0,78$ մ/վ)

Նյութը	Թաղանթի երկարակեցությունը T , 10 ⁶ վ
USU-2	3,82
Էստերան-51	4,32
ՖՂՀ	4,65
ՖՂՀ+մոլիբդենի խտանյութ	6,46
ՖՂՀ+պղնձի խտանյութ	6,22

Ինչպես երևում է աղ. 2-ից, մշակված կոմպոզիտների շփման ընթացքում առաջացած թաղանթների երկարակեցությունը 1,5 անգամ ավելի մեծ է հայտնի կոմպոզիտների շփման արդյունքում առաջացած թաղանթների երկարակեցության արժեքից: Այսպիսով, խնդրի լուծումը մետաղ-պոլիմեր համակարգում շփման և մաշման պրոցեսների արդյունավետ կառավարման և դեկավարման, աշխատունակ և մաշակայուն կոմպոզիտային նյութերի հիմնավորված ընտրության հնարավորություն է ընձեռում:

Ամբողջական գործոնային փորձարկումների մեթոդով [10] իրականացվել է կոմպոզիտների բաղադրակազմերի լավարկումը, արդյունքում ստացվել են նյութեր՝ մաշման նվազագույն ուժգնությամբ և շփման փոքր գործակցի արժեքով: Որպես արձագանքի ֆունկցիա ընդունվել են հանքանյութի x_1 և ստեարինաթթվի x_2 պարունակությունները: Փորձարարական տվյալների ծրագրային մշակման արդյունքում ստացվել են ռեգրեսիոն հավասարումներ, որոնք արտացոլում են լցանյութերի ազդեցությունը կոմպոզիտների հիմնական շահագործական հատկությունների վրա:

$$I \cdot 10^{-9} = 8,03 - 0,032x_1 + 0,372x_2 - 4,09x_1x_2 + 0,348x_1^2 + 0,448x_2^2, \quad (2)$$

$$f = 0,399 - 0,032x_1x_2 + 0,0068x_1^2 + 0,016x_2^2: \quad (3)$$

Ստացված հավասարումների վերլուծությունը ցույց է տալիս, որ մաշման ուժգնության և շփման գործակցի վրա ավելի մեծ ազդեցություն է ունենում հանքանյութի և ստեարինաթթվի համատեղ օգտագործումը: Կոմպոզիտների բաղադրակազմի լավարկումը կատարվել է հատուկ էլեկտրոնային ծրագրով (2) և (3) հավասարումներով նկարագրված արձագանքի մակերևույթների վերլուծության արդյունքում: Մաշման նվազագույն ուժգնությամբ և շփման փոքր գործակցով օժտված են այն կոմպոզիտները, որոնց կազմում հանքանյութի պարունակությունն է $x_1 = 10 \dots 13,6$ կշռ.%, իսկ ստեարինաթթվինը՝ $x_2 = 8 \dots 10,4$ կշռ.%: Այսպիսով, հակաշփական նշանակությամբ մեքենամասեր պատրաստելու համար առաջարկվում է կոմպոզիտային նյութերի հետևյալ բաղադրակազմը՝ կապակցող պոլիմերային նյութ (ՖՂՀ)՝ 76...82 կշռ.%, հանքային լցանյութ՝ 10...13,6 կշռ.%, ստեարինաթթու՝ 8...10,4 կշռ.%: Նշված բաղադրակազմով կոմպոզիտային նյութերից պատրաստված նմուշների լավարկված մաշման ուժգնության և շփման գործակցի արժեքներն են՝ $I = 3,22 \cdot 10^{-9} \dots 5,42 \cdot 10^{-9}$, $f = 0,093 \dots 0,118$:

Եզրակացություն: Տեղական հանքանյութերի՝ մոլիբդենի և պղնձի բնական խտանյութերի օգտագործումը որպես լցանյութ ՖՂՀ համար նպաստում է ինքնալուծվող պոլիմերային հիմքով կոմպոզիտի շփագիտական հատկությունների զգալի բարելավմանը: Ստեարինաթթվով մոդիֆիկացված հանքանյութերի կիրառումը պոլիմերային հիմքով կոմպոզիտներում հանգեցնում է կոմպոզիտի մաշվածքի չափի զգալի բարելավմանը՝ միաժամանակ ապահովելով շփման փոքր գործակցից:

Ամբողջական գործոնային փորձարկումների մեթոդով իրականացված կոմպոզիտների բաղադրակազմերի լավարկման արդյունքում առաջարկվել են նյութեր՝ մաշման նվազագույն ուժգնությամբ և շփման փոքր գործակցի արժեքով: Երաշխավորվում են ինքնայուղվող պոլիմերային հիմքով կոմպոզիտային նյութեր հետևյալ բաղադրակազմով՝ կապակցող նյութ (ՖԴՀ)՝ 76...82 *կշռ. %*, հանքային լցանյութ՝ 10...13,6 *կշռ. %*, ստեարինաթթու՝ 8...10,4 *կշռ. %*: Երաշխավորվում է ստացված կոմպոզիտային նյութերի գործնական կիրառումը մեքենաների ու մեխանիզմների տարբեր նշանակությամբ շփահանգույցների մասերի՝ սահքի առանցքակալների և ուղղորդիչների, մանրամոդուլ ատամնանիվների և չոր շփման $Pv \leq 2,0$ *ՄՊա·մ/վ* պայմաններում աշխատող պոլիմերային այլ մեքենամասերի պատրաստման համար:

Առաջարկվել է շփանյութափոխանցման թաղանթների երկարակեցության գնահատման հաշվարկային բանաձևը, որը հնարավորություն է ընձեռում շփագիտական պարզ և փոքրաթիվ փորձերի արդյունքների հիման վրա կանխագուշակել մետաղապոլիմերային շփահանգույցներում ձևավորված թաղանթների երկարակեցությունը և կատարել կոմպոզիտային նյութերի հիմնավորված ընտրություն, կանխատեսելով դրանց աշխատունակությունը և մաշակայունությունը:

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Շփագիտություն» բաժանի գիտահետազոտական լաբորատորիայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Трибология: Исследования и приложения. Опыт США и стран СНГ / Под ред. **В.А. Белого, К. Лудемы, Н.К. Мышкина**. – М.: Машиностроение, 1993. – 454 с.
2. **Крагельский И.В., Добычин М.Н., Камбалов В.С.** Основы расчетов на трение и износ. – М.: Машиностроение, 1977. – 525 с.
3. Основы трибологии (трение, износ, смазка) / Под общ. ред. **А.В. Чичинадзе**. – М.: Машиностроение, 2001. – 664 с.
4. **Погосян А.К., Карапетян А.Н., Оганесян К.В.** Трибохимические процессы и их влияние на фрикционные свойства антифрикционных полимеров // Тр. Межд. конф. “Поликомтриб-2013”. – Гомель, 2013. – С. 184.
5. **Pogosian A.K., Karapetyan A.N., Hovhannisyan K.V.** Development of composite antifriction materials based on the thermoplastic polymers // Tribologia. – 2005. – N 5. – P. 111-119.
6. **Pogosian A.K., Bahadur S., Hovhannisyan K.V., Karapetyan A.N.** Investigation of the tribochemical and physicomechanical processes in sliding of mineral-filled formaldehyde copolymer composites against steel // Wear. – 2006. – N 260. – P. 662-668.
7. **Pogosian A.K., Hovhannisyan K.V., Isajanyan A.R.** Polymer friction transfer: Encyclopedia: Springer Science. – New-York, 2013. – P. 2585-2592.

8. Մելիքսեթյան Ն.Գ., Հովհաննիսյան Կ.Վ., Կարապետյան Ա.Ն., Սարոյան Վ.Վ. Մետաղապոլիմերային շփահանգույցներում ինքնայուղման մեխանիզմի հետազոտումը և դիֆուզիոն մոդելի մշակումը // ՀԳԱԱ և ՀՊՃՀ Տեղեկագիր. Տեխն. գիտ. սերիա. – 2016. – Հատ. LXIX, N3. – էջ 228-235:
9. Карапетян А.Н., Оганесян К.В., Сароян В.В. Влияние физико-механических и трибохимических процессов на формирование пленок фрикционного переноса // Труды Межд. научн.-техн.конф. "Поликомтриб-2015". – Гомель, Беларусь, 2015. – С. 96.
10. Евдокимов Ю.А., Колесников В.И., Тетерин А.И. Планирование и анализ экспериментов при решении задач трения и износа. – М.: Наука, 1980. – 228 с.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 21.03.2017:

Н.Г. МЕЛИКСЕТЯН, К.В. ОГАНЕСЯН, А.Н. КАРАПЕТЯН, В.В. САРОЯН
ТРИБОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ КОМПОЗИЦИОННЫХ
ПОЛИМЕРНЫХ МАТЕРИАЛОВ С ИСПОЛЬЗОВАНИЕМ
МЕСТНЫХ КОНЦЕНТРАТОВ

Предложены технология получения композиционных самосмазывающихся материалов на полимерной основе с использованием местных концентратов, а также расчетная формула для оценки долговечности пленок фрикционного переноса в металлополимерном трибоконтакте. Методом планирования многофакторного эксперимента оптимизированы составы композитов, что позволяет рекомендовать материалы с минимальными значениями интенсивности изнашивания и коэффициента трения.

Ключевые слова: полимер, наполнитель, фрикционный перенос, износ, коэффициент трения, долговечность пленки.

N.G. MELIKSETYAN, K.V. HOVHANNISYAN, A.N. KARAPETYAN,
W.V. SAROYAN

TRIBOLOGICAL INVESTIGATIONS OF COMPOSITE POLYMER MATERIALS
BY USING LOCAL CONCENTRATES

A technology for obtaining composite self-lubricating materials based on polymers by using local concentrates, as well as a calculation formula for estimating the friction transfer film durability in metal-polymer tribocontact are proposed. By the method of planning of a multi-factor experiment, the composite components are optimized, that allows to recommend materials with minimum values of wear intensity and coefficient of friction.

Keywords: polymer, filler, friction transfer, wear, coefficient of friction, film durability.

В.С. САФАРЯН, Г.В. АРУТЮНЯН

**ИССЛЕДОВАНИЕ ЭКСТРЕМАЛЬНЫХ СВОЙСТВ РЕЖИМОВ
ОДНОРОДНОЙ ЦЕПНОЙ СХЕМЫ**

Исследуются экстремальные свойства режимов цепных схем с одинаковыми не-симметричными четырехполюсниками. Для решения поставленной задачи применяются аналитические выражения функции передачи по току и напряжению, полученные методом структурных чисел. Используя функцию передачи по току, аналитическим путем доказано, что при определенных соотношениях параметров четырехполюсника действующие значения тока и напряжения на выходах звеньев цепной схемы имеют экстремальные значения. Значения экстремальных режимных параметров определяются графическим решением трансцендентного уравнения. Приведены графики изменения действующих значений тока и напряжения на выходе звеньев цепной схемы при различных обобщенных параметрах четырехполюсника.

Ключевые слова: цепная схема, структурные числа, передаточные функции, экстремальные свойства, трансцендентное уравнение, графический метод.

Введение. Цепные схемы используются для моделирования сетей дорожного освещения, электрических фильтров, линий электропередачи с распределенными параметрами и т.д. [1, 2]. Режимы цепных схем можно определить методами контурных токов, узловых потенциалов или же методом подобия (единичного тока) [1, 2]. Выбор одного из перечисленных методов позволит решить задачу численными методами.

Методом структурных чисел [3] получены аналитические выражения (передаточные функции по току и напряжению), связывающие режимные параметры (токи, напряжения, мощности) звеньев цепной схемы с обобщенными параметрами одного звена [4]. В работе [5] исследуются режимы цепных схем численными методами с использованием аналитических выражений передаточных функций по току и напряжению, полученных методом структурных чисел [3]. В отличие от [5], в настоящей работе аналитическим путем обосновано свойство экстремальности цепных схем.

Постановка задачи. Рассматривается схема из n Г-образных, одинаковых, пассивных четырехполюсников при питании со стороны входных зажимов и холостом ходе со стороны выходных. Исследуются экстремальные свойства передаточной функции по току цепной схемы, полученной методом структурных чисел [3].

На рис. 1 представлена исследуемая схема с раскрытой структурой четырехполюсников.




Рис. 1. Каскадное соединение Г-образных четырехполюсников

Решение задачи. Известно, что любой пассивный четырехполюсник характеризуется через входные сопротивления Z_a (Z_b) со стороны входных (выходных) зажимов a, a' (b, b') при холостом ходе и Z_{ab} (Z_{ba}) при коротком замыкании на зажимах b, b' (a, a') соответственно. При этом между этими параметрами существует связь [1,2]

$$Z_a Z_{ba} = Z_b Z_{ab}.$$

Очевидно, что в данном случае имеем

$$Z_a = Z_1 + Z_2, \quad Z_b = Z_2, \quad Z_{ab} = Z_1, \quad Z_{ba} = \frac{Z_1 Z_2}{Z_1 + Z_2}.$$

Алгеброй структурных чисел разработаны соотношения, когда ток (напряжение) любого звена цепной схемы выражается через параметры одного четырехполюсника и их количества n в цепи [4]:

$$i_i = i_0 \dot{K}_{iU} = i_0 \frac{1 - \dot{C}^{n-i}}{1 - \dot{C}^n} \cdot \dot{C}^{i/2}, \quad (1)$$

$$\dot{U}_i = \dot{U}_0 \dot{K}_{iU} = \dot{U}_0 \frac{Z_{\infty a} + Z_{\infty b} \dot{C}^{n-i}}{Z_{\infty a} + Z_{\infty b} \dot{C}^n} \cdot \dot{C}^{i/2}, \quad (2)$$

где $\dot{C} = \frac{Z_b - Z_{\infty b}}{Z_b + Z_{\infty a}} = C e^{j\varphi}$,

$$Z_{\infty a} = \frac{1}{2} \left((Z_a - Z_b) + \sqrt{(Z_a - Z_b)^2 + 4Z_a Z_{ba}} \right),$$

$$Z_{\infty b} = \frac{1}{2} \left((Z_b - Z_a) + \sqrt{(Z_b - Z_a)^2 + 4Z_b Z_{ab}} \right).$$

Физический смысл величины $\dot{C}$ заключается в том, что если к выходным (входным) зажимам четырехполюсника подключить $Z_H = Z_{\infty a}$ ($Z_H = Z_{\infty b}$), то квадрат коэффициента передачи по напряжению и току будет равен [4]

$$\dot{C} = \dot{K}_U^2 = \dot{K}_I^2.$$

Для несимметричного четырехполюсника $Z_{\infty a}$ ($Z_{\infty b}$) это такая нагрузка, что если к выходным (входным) зажимам четырехполюсника подключить

$Z_n = Z_{\infty a} (Z_n = Z_{\infty b})$, то входное сопротивление будет равно $Z_{\infty a} (Z_{\infty b})$. Если нагрузка $Z_{\infty a} (Z_{\infty b})$ подключена к выходным (входным) зажимам цепной схемы из n одинаковых несимметричных четырехполюсников, то входное сопротивление относительно любых зажимов цепочки будет равно $Z_{\infty a} (Z_{\infty b})$.

Величины $\dot{C}, Z_{\infty a}, Z_{\infty b}$ являются постоянными для данной цепной схемы и зависят от параметров одного четырехполюсника.

Через параметры одного четырехполюсника и их количества n в цепи выражаются также входные сопротивления цепной схемы при коротком замыкании и холостом ходе на выходе [4].

Исследуем распределение действующих значений тока (напряжения) вдоль цепи. Представим выражение (1) с учетом того, что $\frac{i_0}{1-\dot{C}^n}$ не зависит от i :

$$I(i) = \frac{i_0}{1-\dot{C}^n} \left(\dot{C}^{\frac{i}{2}} - \dot{C}^{n-\frac{i}{2}} \right) = \frac{i_0}{1-\dot{C}^n} \dot{A}(i). \quad (3)$$

Из (3) видно, что поведение функции $\dot{I}(i)$ сводится к исследованию функции

$$\dot{A}(i) = \dot{C}^{\frac{i}{2}} - \dot{C}^{n-\frac{i}{2}}.$$

Представим комплексную функцию $\dot{A}(i)$ в алгебраической форме:

$$\dot{A}(i) = a(i) + jb(i),$$

где

$$a(i) = \dot{C}^{\frac{i}{2}} \cos \frac{i}{2} \varphi - \dot{C}^{(n-\frac{i}{2})} \cos \left(n - \frac{i}{2} \right) \varphi, \quad b(i) = \dot{C}^{\frac{i}{2}} \sin \frac{i}{2} \varphi - \dot{C}^{(n-\frac{i}{2})} \sin \left(n - \frac{i}{2} \right) \varphi.$$

Модуль комплексной величины $\dot{A}(i)$ равен

$$A(i) = \sqrt{[a(i)]^2 + [b(i)]^2} = \sqrt{\dot{C}^i + \dot{C}^{2n-i} - 2\dot{C}^n \cos(i-n)\varphi}. \quad (4)$$

Исследуем (4) на экстремум. Для этого найдем производную по i и приравняем ее к нулю:

$$A'(i) = \frac{\dot{C}^i \ln \dot{C} - \dot{C}^{2n-i} \ln \dot{C} + 2\varphi \dot{C}^n \sin(i-n)\varphi}{2 \cdot \sqrt{\dot{C}^i + \dot{C}^{2n-i} - 2\dot{C}^n \cos(i-n)\varphi}} = 0. \quad (5)$$

Решение уравнения (5) сводится к следующему:

$$\begin{cases} \dot{C}^i \ln \dot{C} - \dot{C}^{2n-i} \ln \dot{C} = 2\varphi \dot{C}^n \sin(n-i)\varphi, \\ \dot{C}^i + \dot{C}^{2n-i} - 2\dot{C}^n \cos(n-i)\varphi > 0. \end{cases}$$

Сначала проверим условие существования выражения (5) на интервале $i = \overline{0; n}$. Обозначим $g_1(i) = \dot{C}^i + \dot{C}^{2n-i}, g_2(i) = 2\dot{C}^n \cos(n-i)\varphi$.

Исследуем функцию $g_1(i)$:

$$g_1'(i) = C^i \ln C - C^{2n-i} \ln C = \ln C (C^i - C^{2n-i}).$$

Следовательно, при $C < 1, \ln C < 0, C^i - C^{2n-i} > 0 - g_1'(i) < 0$; при $C > 1, \ln C > 0, C^i - C^{2n-i} < 0 - g_1'(i) < 0$, т.е. $g_1(i)$ - убывающая функция, при этом $g_{1\max}(i) = g_1(0) = 1 + C^{2n}, g_{1\min}(i) = g_1(n) = 2C^n$.

Очевидно, что $g_{1\max}(i) > g_{1\min}(i)$, поскольку $(1 - C^n)^2 > 0, (C \neq 1)$. При $i = n$ функция (5) не определена.

Исследуем функцию $g_2(i)$.

